



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Մերունները չպետք է զրկվեն հայրենատիրության իրավունքից

Պետության մեջ դիվանագիտական աշխատանքը ամենանորը է բարդ աշխատանքներից մեկն է: Պատահական չէ, որ դիվանագիտական ասպարեզում արարողակարգերը եւ փոխադարձ հարաբերությունների կանոնակարգման դրույթները հարգվում են մանրակրկիտ կերպով քանի որ յուրաքանչյուր սխալ կամ վրիպում դիմացինի կողմից հանրային բեմում ինչ-որ նշանակություն է պարունակելու կամ որեւէ միտումի արտահայտման միջոց է ընկալվելու: Հենց այդ պատճառով է, որ դիվանագիտական ասպարեզում աշխատողները կայացած եւ ընկալելի պետություններում ամենափորձառուներն են լինում, եւ այդ ասպարեզում տարիների փորձ ունենալը համարվում է անշրջանցելի պայման, օրինակ՝ դեսպան լինելու կամ որեւէ պատվիրակության մաս կազմելու համար: Սա ընդհանուր օրենք է եւ ակնհայտ իրականություն համաշխարհային դիվանագիտական բեմահարթակում: Ցավոք սրտի, Հայաստանի Հանրապետության ներկա իշխանություններն անտեսում են այդ կարեւոր հանգամանքը: Դեսպան է նշանակվում դիվանագիտական ասպարեզում որեւէ փորձ չունեցողը, երկիրը ներկայացնող պատվիրակության անդամներ են դառնում ինչ-որ մեկի հետ քայլելու աշխատանքային փորձ ունեցող անփորձները, եւ այսպիսով՝ ցանկանում են՝ միջազգային բեմահարթակում Հայաստանը ընկալվի որպես լուրջ եւ հավասարակշռված պետություն: Այս դիվանագիտական կազմով եւ երբեք ունեցումներով՝ դա հնարավոր չէ:

Հայկական դիվանագիտության այս տխուր համայնապատկերում հարկ է անդրադառնալ նաեւ մի այլ կարեւոր հանգամանքի. պետական բարձր պաշտոն զբաղեցնող անձնավորությունը եւս, անկախ իրենից, դիվանագիտական աշխատանք է կատարում: Լրատվական եւ հեռահաղորդակցության միջոցների զարգացման ներկա պայմաններում այլեւս անիմաստ է դառնում որեւէ արտահայտություն կամ միտք արտաբերել փակ շրջանակի համար: Պետական պատասխանատվություն ունեցող որեւէ անհատի արտահայտությունը միշտ էլ խոշորացույցի տակ է, վերծանվում է այլ երկրների դիվանագիտական շրջանակների կողմից, եւ ի մասնավորում, մեր հակառակորդ եւ թշնամի պետություններն այդ արտահայտությունները միջազգային հարթակներում օգտագործում են մեր երկրի դեմ: Այս ասպարեզում եւս, ցավոք, Հայաստանի Հանրապետության պետական բարձրաստիճան պաշտոնյաները «խելամտությամբ» չեն փայլում:

Այս բոլորը կարելի է շտկել, կարելի է սրբագրել, եթե գոյություն ունենա սովորելու, հայրենիքի գաղափարը յուրացնելու եւ պետության իմաստն ու հայրենանվեր աշխատանքի առաքելությունն ընկալելու առկայության պարագայում:

Պատերազմից հետո, որպես պարտված կողմ, անհավասարակշիռ, անորոշ եւ վրիպումներով լի արտահայտությունները դիվանագիտական դաշտում եւս խորացնում են մեր կրած պարտությունը:

Ժամանակին ՀՀ վարչապետ հանդիսացող անձը իր «փայլուն» մտքերից մեկը համարում էր այն, որ Արցախի հարցի լուծումը պետք է ընդունելի լինի Արցախի, Հայաստանի եւ Ադրբեջանի բնակչության համար: Ներկա կացության հեռանկարը մի բան շատ հստակ է դարձնում. այս պայմաններում սպասվող լուծումն անընդունելի է եւ Արցախի, եւ հայ ժողովրդի համար, իսկ կարելուրն այն է, որ չփակվեն այն ճանապարհները, որոնք կտանեն դեպի ցանկալի լուծում՝ թեկուզ տարիներ հետո: Ահա այստեղ է, որ հայկական դիվանագիտությունը մեծ աշխատանք ունի կատարելու: Աշխատանք, որի միջոցով իրավունքի ձեռքբերման ուղիները միշտ պետք է հասանելի լինեն եւ ընկալելի միջազգային հանրության կողմից: Սա պահանջում է հարատւ եւ անխոնջ աշխատանք: Թշնամիների կողմից այժմ հայ ժողովուրդն իրավազրկվել է, իսկ իշխանությունների անխոհեմ քաղաքականության պատճառով այդ իրավազրկումը փառսանցվում է հաջորդ սերունդներին, ինչն անընդունելի է:



Սգի եւ հուսահատության էջը փակված է, հավելյալ թափով աշխատելով պետք է առաջ շարժվենք. Հակոբ Տեր-Խաչատուրյան

ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի ելույթը ՀՀԴ Հայ Դապի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովի բացման արարողության ժամանակ.

«1980-ական թթ. վերջերին սկսվեց Արցախյան շարժումը, որը հանգեցրեց Հայաստանի անկախությանն ու Արցախի ազատագրմանը: Մենք ունեցանք անխոցելիության զգացում. հաղթանակների նոր դարաշրջան էր բացվել մեր առջեւ, եւ այդ դարաշրջանում մենք տեսանք, թե ինչպես հայ ժողովուրդը բռնկեց դարձած կարողացավ իր դարավոր երազանքի մի մասն իրականացնել: Անկասկած, ընդհանուր խանդավառության տարիներ էին, բոլորս էլ լծվել էինք աշխատանքի, դուք դրա ոչ միայն ակնատեսներն էք, այլ նաեւ կիրարկման մասնագետները: Աշխարհով մեկ ունեցանք այն զգացումը, որ հայկական դարաշրջան է բացվում մեր առջեւ:

Այդ պատճառով էլ, անշուշտ, առավել ծանր էր Արցախյան 2-րդ պատերազմի ահավոր ցավը, վիշտը, որովհետեւ մենք հեռացանք այդ անխոցելիության զգացումից. այս ապիկար իշխանության պատճառով եւ պատերազմի ընթացքում թրջական ու ադրբեջանական միացյալ հարձակումներով ստեղծվեց կացություն, որը ցնցեց ամբողջ հայ աշխարհը: Այս կացության մեջ մենք անմիջապես հավաքվեցինք. Հայ դապի հանձնախմբի ընկերները, բարեկամները, որ կան այստեղ, քննեցինք՝ այս պատերազմի ընթացքում եւ պատերազմից հետո ինչ հատուկ մարտավարական ճշգրտումներ են հարկավոր, որպեսզի առաջ տանենք մեր աշխատանքը: Ամբողջ պատերազմի ընթացքում Հայ Յեղափոխական


կան Դաշնակցությունը տրամադրեց իր ամբողջ ներուժը: Տարվեցին քաղաքական, քարոզչական աշխատանքներ, ցույցեր՝ հայության ձայնը աշխարհի խղճին հասցնելու համար: Ծիշտ է՝ արդյունքը մեզ հուսալքեց, բայց պատերազմի ժամանակ մենք միասին ստեղծեցինք այն համահայկական համախոհությունը, որի շնորհիվ կարողացանք ավելի քան 170 մլն դոլարի գումար փոխանցել Արցախին:

Ինչպես անցյալում, անպես էլ հիմա ավելի մեծ թափով շարունակելու ենք աշխատանքները՝ ի նպաստ հայրենիքի: Առհասարակ, երբ խոսում ենք Հայ Դապի մասին, նկատի ենք ունենում 4 ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրի մեջ էլ դուք ունեք ձեր կարեւոր ներդրումը: Առաջին ոլորտը հայրենիքի իրազեկման աշխատանքներն են, Հայաստանի պետականության ամրապնդան, Արցախի ինքնորոշման իրավունքի եւ անկախության ճանաչման աշխատանքներն են:

Երկրորդը՝ Հայ դապի ոլորտն է՝ Ցեղասպանության ճանաչման, նրա հետեւանքների վերացման, պահանջատիրության ուղղությամբ: Երրորդը՝ հայ ժողովրդի իրավունքների ու դրանց պաշտպանության խնդիրն է: Չորրորդը՝ հայ երիտասարդության քաղաքականացման խնդիրն է:

Ուրախ եմ, որ այսօր մեզ հետեւում են նաեւ օտար, ոչ հայ բարեկամներ, ովքեր հատուկ ուղերձ են հղել այս խորհրդաժողովին: Նկատի ունենալով վերջիններիս՝ խորհրդաժողովին հետեւելը, թույլ տվեք տարբեր լեզուներով մի քանի խոսք ասել ոչ հայ բարեկամներին.

- Սիրելիներ, սգի եւ հուսահատության էջը փակված է մեզնից շատերի համար, հավելյալ թափով աշխատելով պետք է առաջ շարժվենք»:



Գույժ

Նոյեմբերի 23-ին կորոնավիրուսային հիվանդության պատճառով կյանքից հեռացավ ՀՀԴ Ստեփանակերտի կոմիտեի ներկայացուցիչ Աշոտ Պետրոսյանը: Աշոտ Պետրոսյանը ՀՀԴ գաղափարական սկզբունքներին հավատարիմ, պատասխանատու ընկեր էր: Տարիներ շարունակ եղել է ՀՀԴ Ստեփանակերտի կոմիտեի ներկայացուցիչ, եղել է նաեւ ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամ: 1990-ական թվականներից սկսած՝ մասնակցել է Արցախի ազատագրական պայքարի ռազմական գործողություններին, ծանր վիրավորում ստացել, որի հետեւանքով մինչեւ իր մահկանացուն կնքելը ունեցել է առողջական խնդիրներ: Մեր սիրելի ընկեր Աշոտը իր կուսակցական կյանքում եղել է հանձնառու եւ պարտաճանաչ: Լուռ ու մունջ, առանց ակնկալիքների, կարգապահությամբ կատարել է իր պարտականությունները: ՀՀԴ Արցախի կառույցի անուկից մեր խորին ցավակցություններն ենք հայտնում սիրելի ընկերոջ ընտանիքին, բարեկամներին, հարազատներին եւ ընկերներին: **ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտե**

ՀՀ Գաղափարային Կոնսերվատիվ Կուրսի Կազմակերպչական Կոմիտեի Կողմից Մեծ Բրիտանիայի Կառավարության Կողմից Մեծ Բրիտանիայի Կառավարության Կողմից

Երևանում Լոյտմբերի 29-ին մեկնարկեց ՀՀ Գաղափարային Կոնսերվատիվ Կուրսի Կազմակերպչական Կոմիտեի կողմից, որին մասնակցում են Հայ Դատի ավելի քան 20 հանձնախմբերից և գրասենյակներից, ինչպես նաև ՀՀ Կուսակցական մարմիններից ժամանած մոտ 50 ներկայացուցիչներ: Բացման արարողության ժամանակ ելույթներով հանդես են եկել ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Յուրի Տեր-Կապուտյանը, ՀՀ Բյուրոյի նախագահ Արմեն Ռուստամյանը, ՀՀ Գաղափարային Կուրսի Կազմակերպչական Կոմիտեի նախագահ Կիրոս Մանույանը, ՀՀ Գաղափարային Կուրսի Կազմակերպչական Կոմիտեի նախագահ Իշխան Սաղաթեյանը:

Կոնսերվատիվ կուրսի աշխատանքները կշարունակի Գործառնա, ապա՝ Արցախի Հանրապետությունում: Օրակարգը վերաբերում է Հայ Դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքի բոլոր ոլորտներին՝ ստեղծված իրավիճակում Արցախի հիմնական հարցի արդարացի և արդարադատ լուծմանը հասնելու ուղղություններից մինչև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, հատուցումներ, Թուրքիա-Ադրբեջանի հակահայ գործունեությանը հակազդեցություն և այլն:

Արցախի հայաթափման վտանգի չեզոքացումն առաջնահերթություն է. Արմեն Ռուստամյան

44-օրյա պատերազմը և նրան հաջորդած իրադարձությունները զգալիորեն փոխել են հարավային Կովկասում դերակատար ուժերի ռազմաքաղաքական հավասարակշռությունը: Ստեղծված վիճակը պահանջում է կատարել Հայաստանին և Արցախին անմիջականորեն սպառնացող վտանգների ամբողջական վերացնահատում և դրա վրա կառուցել մեր առաջիկա ծրագրերն ու անելիքները:

Եթե մինչև այս պատերազմը հայության և Հայ Դատի գլխավոր խնդիրը ազատամարտում արձանագրված հաղթանակի արդյունքների ամրագրումն էր, ապա հիմա՝ այս պատերազմում կրած պարտության և կապիտուլյացիայի հետևանքների չեզոքացումն ու առաջացած նոր մարտահրավերների հաղթահարումն է:

Նկատի ունենալով Մեծ Թուրանի գաղափարով թուրքական երկրները համախմբելու և հնարավորինս արագ այս պատերազմից առավելագույնն ստանալու՝ թուրք-ադրբեջանական տանդեմի հավակնությունները, Հայաստանին և Արցախին սպառնացող անմիջական վտանգն այսօր Հայաստանի թուրքացումն ու Արցախի հայաթափումն է: Հետևաբար, մեր գլխավոր խնդիրը պետք է լինի դա բացառելը, իսկ դա բացառելու անհրաժեշտությունն ակնհայտ է դառնում, երբ պարզում ենք, թե ինչ ենք հասկանում թուրքացում ասելով: Թրքացման բնորոշումն ու նախաձեռնումը, ըստ իս, հետևյալն է. թուրքացումը Թուրքիայից Հայաստանի քաղաքական, անվտանգային, տնտեսական և, ընդհանրապես, բազմամակարդակ և բազմաբնույթ կախվածության վիճակն է: Թրքացման վերջնական հետևանքը կենսական զիջումներով ուղեկցվող հայոց պետականության փլուզումն է, երբ Հայաստանը վերածվում է իրավական առումով անկախ, բայց փաստացի՝ Թուրքիայից կախյալ, կցորդ երկիր:

Հետևաբար, հայության և Հայաստանի քաղաքական այս բարդագույն վերադասավորումների շրջանում կանգնած է թրքացման սպառնալիքը չեզոքացնելու և մեր սերունդների անժամանցելի իրավունքները պահպանելու հրամայականի առջև:

Անխուսափելիորեն, հայկական անկախ պետականության փլուզմանն է հանգեցնելու նաև Արցախի հայաթափումը: Այս պատերազմը և դրան հաջորդած սպառնալիքները են մեկ անգամ ակնհայտ դարձրել Արցախի հայկականությունն ու Հայաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պահպանելու խնդիրների փոխկապակցվածությունը:

Ըստ այսմ, Արցախի հայաթափման վտանգի չեզոքացումն առաջնահերթություն է, և կարելի է Նշել, թե որոնք են դրա ապահովման անհրաժեշտ պայմանները:

Արցախի հայաթափման վտանգի չեզոքացումն ապահովելու պայմաններն, ըստ իս, հետևյալն է. Արցախի՝ Ադրբեջանի կազմում որևէ կարգավիճակի բացառում, Արցախի անկախության վիճակի բացառում, Արցախի ինքնապաշտպանության և անվտանգության ապահովում, Արցախի գրավյալ տարածքների դեֆոկուպացիայի խնդիր, Արցախի ժողովրդի անվտանգությունն ու ինքնորոշման իրավունքի իրացումը երաշխավորելու՝ Հայաստանի հանձնառության վերականգնում, Արցախի անկախ կարգավիճակի, նրա տարածքային ամբողջականության վերականգնման և անվտանգության հետ կապված հարցերի լուծման առաջնահերթության ուղղված լիարժեք բանակցային գործընթացի վերականգնում, ճանաչում հանուն փրկության» բանաձեռի կիրառում Արցախի անկախության միջազգային ճանաչման գործընթացում:

Ակնհայտ է, որ պատերազմը ոչ թե ավարտվել է, այլ փոխել է իր բնույթը, և նոր, ավելի ծանր պարտությունից խուսափելու համար անհրաժեշտ է մեծացնել մեր

ժողովրդի և պետության դիմադրողականությունը, որ կարողանանք դիմադրել թուրք-ադրբեջանական այս նորօրյա ասպատակությանը:

Հենց այս առաքելության իրագործմանն է ուղղված համազգային դիմադրություն ձեռնարկելու նախաձեռնությունը: Ինչպես և Հայ Դատը, այս գաղափարը են վերկուսակցական է, ունի համահայկական նշանակություն և նրա հաջողության համար պահանջվելու են միասնական ջանքեր:

Այս ծանր պայմաններում մենք պետք է փորձենք «սայլը տեղից շարժել». Կիրո Մանույան

Պատերազմը նոր իրավիճակ ստեղծեց: Հայաստանի իշխանությունների կեցվածքը պատերազմից հետո անցած մեկ տարվա ընթացքում շատ երկրների մոտ ստեղծել է տրամադրություն, որ այդ հարցն իրենց շատ չի վերաբերում. էթե Հայաստանն իր շահերը չի պաշտպանում, մենք ինչու պետք է պաշտպանենք:

Դեռևս 2009-ին, երբ ստորագրվեցին հայ-թուրքական արձանագրությունները և այն ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանը շրջագայում էր Սփյուռքի



գաղթօջախներով, Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի ատենապետ Քեն Կալիկյանը շատերի ներկայությամբ Մեթ Սարգսյանին ասել էր. «Ձեզ ով է իրավունք տվել մեր վաստակածը մսխելու»: Այսօր էլ մենք ստիպված ենք, որպես Հայ Դատի հանձնախմբերի ցանց, ասելու իշխանություններին, որ դուք չեք կարող, իրավունք չունեք հարվածելու ոչ միայն մեր այսօրվա անվտանգությանը, այլև մեր վաղվա իրավունքին:

Այսօրվա մեր դժվարություններից մեկն այն է, որ ՀՀ իշխանությունների կեցվածքը և մեր կեցվածքը տարբեր են: Դրա համար մենք անհանգիստ ենք, որ Վաշինգտոնից մինչև Գերմանիա դեսպաններ են նշանակված մարդիկ, որոնք դիվանագիտական ասպարեզում փորձ չունեն: Սակայն կան երկրներ, որտեղ կարելի է դեսպաններին հետ նորմալ աշխատել, բայց այդտեղ էլ արված է կացությունը, որովհետև նույն բաները չեն ասում: Այսօր Հայ Դատի որևէ հանձնախումբ չի կարող ինչ-որ մեկին բողոքել, որ Գործիք-Կապան ճանապարհը Ադրբեջանը փակել է: Ինչո՞ւ չի կարող ասել, որովհետև ՀՀ վարչապետն ասում է՝ դա Հայաստանն է: Մենք այդ դեպքում ի՞նչ պետք է բողոքենք:

Այս ծանր պայմաններում մենք պետք է փորձենք «սայլը տեղից շարժել», որովհետև ինչքան էլ իրավիճակը ծանր է, որոշ անհրաժեշտություն կա: Եթե մինչև վերջերս Արցախի ճանաչման ուղղությամբ պետք է համոզեինք մարդկանց, որ եթե չճանաչեք Արցախի անկախությունը, մարդկանց կյանքի ֆիզիկական սպառնալիք կա, հիմա արդեն համոզելու կարիք չկա, 44 օր անընդհատ ու դրանից հետո Ադրբեջանն ամեն օր դա ապացուցում է: Մենք պետք է մեր կամքը, ջանքերը լարենք, չնայած հոգեբանորեն իսկապես ծանր է: Հայ Դատի աշխատանքների համար կարելի է, որ այս իշխանությունները փոխվեն, որովհետև պարզ է, որ իրենք իրենց քաղաքականությունը դեպի դրական փոխելու ոչ ունակություն ունեն, ոչ էլ ցանկություն:

Արցախի և Սյունիքի ճակատագիրը կախված է մեկ պաշտոնյայի որոշումից. Իշխան Սաղաթեյան

Հայ Դատի հանձնախմբերի և գրասենյակների այս խորհրդածողովն անցկացվում է մեր երկրի համար բախտորոշ ժամանակահատվածում, երբ հայրենիքը կանգնած է ներքին ու արտաքին անվտանգությանն առնչվող լրջագույն մարտահրավերների առաջ: Սակայն դժվար ժամանակներն են, որ լավագույնս ի հայտ են բերում իրական նվիրյալներին, ազգային էլիտային: Այս առումով պետք է հպարտությամբ նշել, որ Հայ Դատի պատասխանատու ընկերները, ատամներով տեղ-մեղով ցավն ու կսկիծը, համատարած հուսահատության պայմաններում քայլ անգամ չնահանջեցին հայության շահերի պաշտպանության դիրքերից:

Մեր հայրենիքը, հետևաբար և կուսակցությունը, դիմակայում են իրենց պատմության դժվար փուլերից

մեկը, բայց ոչ միակը: Հարյուրամյակների ընթացքում մեր ժողովուրդն ստիպված է եղել հաղթահարել նման իրավիճակներ, իսկ հաղթահարման բանալին եղել է ստեղծված իրավիճակին ոչ համարժեք, ավելի ուժեղ և շատերի համար անհնարին թվացող պատասխաններում:

Վերահառնման յուրաքանչյուր փուլում դրվել է ոգու բարձրացման, ազգային հպարտության, աշխարհում արժանապատիվ ապրելու իրավունքի վաստակմանն ուղղված ճիգը: 1915թ. Հայոց ցեղասպանությունից հետո ունեցել ենք Առաջին Հանրապետություն, անկախության կորստից հետո ունեցել ենք պայքար Լեռնահայաստանի համար, դիմադրություն Այսուհետև:

Երկրաշարժից հետո ունեցանք Արցախյան ազատագրական պայքար, հաղթանակ, Հայաստանի Հանրապետություն:

Մենք մեր պատմության վերջին 100 տարվա ընթացքում ունեցել ենք անկումներ, բայց ունեցել ենք նաև վերելքներ: Այժմ ունենք պարտություն, բայց դա հայ ժողովրդի հավաքական պարտությունը չէ, դա իշխանության ղեկին հայտնված մի խումբ մարդկանց գործունեության արդյունքն է, և բոլոր այն փորձերը ներքին ու արտաքին մի շարք ուժերի կողմից՝ հայ ժողովրդին ներկայացնել իբրև թույլ ու չհաղթող, ձախողված և դատապարտված ազգ, պետք է ստանան համարժեք պատասխան:

Պետք է չհաշտվել ինքնիշխանության կորստի և պարտության հետ, հաղթահարել նվաստացումը, կառավարել կորուստները և ռիսկերը, վերականգնել արժանապատվությունը, հաղթահարել պարտվածի և փոքր պետություն լինելու հոգեբանությունը, ունենալ ազգային երազ և գնալ այդ երազի հետևից:

Այս օրերին Հայաստանում այսպես մտածող մարդկանց ասում են «հայդատականներ», «ոչմիթիզականներ» կամ «պաթոսով հայրենասերներ»: Իսկ ովքե՞ր են դա ասում՝ մի խումբ անհայրենիք, անսրբություն, ապագային տարրեր, ովքեր մեր երկիրը կանգնեցրին այս աղետի առջև, ովքեր ժողովրդավարությունը հակադրեցին անվտանգությանը, բարեկեցությունը և խաղաղությունը պայմանավորեցին զիջումներով, ովքեր հետևողականորեն թուլացնում են մեր ազգային դիմադրողականությունը:

Հայաստանում ստեղծված այս իրավիճակը ժողովրդի կամքով և ազգային ուժերի առաջնորդությամբ պետք է փոխվի:

Հայաստանի առջև այսօր ծառայած է համակարգային խոշոր ճգնաժամ: Իշխանությունների պնդումները, թե ընտրություններից հետո ճգնաժամը հաղթահարված է, խաբեություն է. ճգնաժամը գնալով ավելի է խորանում՝ մոտենալով անվերադարձ լինելու կետին: Անհրաժեշտ են համալիր մոտեցումներ: Նախ՝ պետք է վերականգնել երկրում սահմանադրականությունը, կազմակերպել երկրի սահմանների պաշտպանությունը:

Ելնելով նոր իրողություններից՝ մշակել հայեցակարգ, իրականացնել համակարգային բարեփոխումներ անվտանգության և տնտեսության ոլորտներում: Կրթական և մշակութային ոլորտներում իրականացնել խորքային բարեփոխումներ, և դրանց հիմքում դնել հայրենասիրական և ազգային դաստիարակությունը: Մասնաբաժան կարելի է ներկայացնել այն ծրագրերը և քայլերը, որոնք անհրաժեշտ են մեր երկրին ստեղծված վիճակից դուրս գալու համար, բայց քանի դեռ կա այս իշխանությունը, այդ ամենն անարդյունք է: Հետևաբար, պետք է ձեռնարկել դիմադրություն՝ դիմադրություն թշնամուն, որ մենք զիջելու հայրենիք չունենք, դիմադրություն՝ հայրենիքը զիջումների տանող օրվա իշխանավորներին, դիմադրություն՝ հանրային կյանքում տեղի ունեցող ապօրինություններին: Իսկ երբ հասնենք համազգային և համաժողովրդական դիմադրության, թշնամին կհեռանա մեր տնից, իսկ օրվա իշխանություններն՝ իրենց աթոռները:

Ժամանակը սուղ է. կամ այն կօգտագործենք մեր օգտին, կամ կկորցնենք անվերադարձ:

Հայ ժողովուրդն այդ ներումն ունի. ներում ունի ոտքի կանգնելու 10 մլն հայությունը: Հայաստանի վերականգնումն անհնար է առանց Սփյուռքի, իսկ այն խորն է և բազմաաշերտ:

Անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր միասնական օրակարգ: Դրա համար անհրաժեշտ է, նախ՝ համազգային նպատակների սահմանում, վստահության վերականգնում, հայրենիքով հպարտ լինելու միջավայր, հայրենադարձությունը խրախուսող նոր ռազմավարություն, պետականաշինության մեջ սփյուռքահայության անխուսափելի մասնակցություն:

Արցախի ճակատագիրը կանխորոշված չէ, Արցախի և Սյունիքի ճակատագիրը կախված է մեկ պաշտոնյայի որոշումից: Արցախի և հայ ժողովրդի ճակատագիրը մեր ձեռքերում է: Եկեք չմոռանանք Արցախը մեր ժառանգությունն է, մեր անվտանգությունը, մեր անկախությունը, մեր ապրելու և ապրեցնելու բնական իրավունքը, Արցախի մեր հող ու ջուրն է, մեր արյունը, մեր ինքնությունը: Նահանջել չկա, հետքայլ կա, պայքարը պետք է շարունակենք:

Քանի սրանք կան, մեր հիասթափությունները կլինեն շարունակական

44-օրյա պատերազմի, Արցախում 337 դերակատարության, Արցախի ներքաղաքական իրավիճակի եւ հետագա զարգացումների մասին «Ապառաժ»-ը գրուցել է 337 Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԱՀ Ազգային ժողովի «Յայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիսյանի հետ:

- 44-օրյա պատերազմից ավելի քան մեկ տարի է անցել: Վերլուծելով այն ժամանակվա իրավիճակը՝ կարո՞ղ ենք ասել, որ պատերազմն անխուսափելի էր:

- Պատերազմից հնարավոր էր խուսափել: Այն անխուսափելի են դարձրել 33 իշխանությունները, որոնք իշխանափոխությունից հետո ամեն ինչ արեցին օր առաջ պատերազմը մոտեցնելու համար: Խոսքը վերաբերում է թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականությանը: Պատերազմը ցույց տվեց, որ Հայաստանը փաստորեն մենակ էր մնացել՝ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի, հարեւան Իրանի հետ հարաբերությունների վատթարացման հետեւանքով: Հիշենք Նիկոլ Փաշինյանի արած հայտարարությունն այն մասին, որ մի օր հայ-իրանական սահմանը կարող է փակվել: Այսպիսով, ռազմավարական իմաստով մեր բոլոր դաշնակիցները, կամ այն պետությունները, որոնք տարածաշրջանում ունեն նույն շահերը, Հայաստանի իշխանության ապիկար քաղաքականության հետեւանքով չէզոքացվել էին:

Ինչ վերաբերում է ներքին ճակատին, իշխանափոխության առաջին օրից շարժիչ ուժ դարձած ատելությունը շարունակվեց նաեւ հետագա տարիներին: Հասարակությունը բաժանեցին «սեւերի եւ սպիտակների», «նախկինների ու ներկաների», սկսվեց «վիուկների որս» եւ, որպես հետեւանք, ազգը պառակտվեց: Մենք հաղթանակի ենք հասել մեր ազգի միասնական ներուժն օգտագործելով: Նույն իրավիճակն ստեղծվել էր բանակի ներսում. «կոռումպացված գեներալներ», «զինվորի բաժին յուրացնողներ» պիտակավորումներով փաստորեն գլխատվել է բանակը:

Այսպիսով, պատերազմի նախօրյակին, 2.5-3 տարվա ընթացքում այս հասարակությունն առավելագույնս պառակտվել է: Դժվար է ասել՝ դա գիտակցաբար վարվող քաղաքականությունն է, թե՞ պարզապես ապաշնորհության հետեւանք: Ամենդուրեւս կանխավարկածը հարգելով հանդերձ, պետք է արձանագրել 33 իշխանությունների հետեւյալ քայլերը՝ ազգի պառակտում, եկեղեցու, ազգային կուսակցությունների, ազգային մտածելակերպի նկատմամբ հալածանք: Այս քաղաքականությունը գիտակցված դավադրություն է հիշեցնում:

Վերջին հաշվով, փաստերը վկայում են, որ պատերազմից կարելի էր խուսափել երկիրը միասնական պահելու, բանակը զորացնելու, հավասարակշռված արտաքին ու ներքին քաղաքականություն վարելու դեպքում:

- Պատերազմի օրերին ԱԺ պատգամավորներն ամենօրյա ռեժիմով կատարվող իրադրությունների մասին հաղորդումներ էին ստանում ԱՀ նախագահից: Այդ օրերին ձեռնարկված միջոցառումները համարժեք էին տիրող իրավիճակին:

- Ոչ, համարժեք չէին տիրող իրավիճակին: Թեկուզ այն փաստը, որ պատերազմի հենց առաջին օրը պետք է ստեղծվեր պարետատուն, որը գործի դրվեց պատերազմից միայն 20 օր հետո: ԱՀ նախագահը ժամանակ առ ժամանակ այցելում էր Ազգային ժողով եւ տեղեկություններ հաղորդում, սակայն շատ դեպքերում դրանք իրականությանը չէին համապատասխանում: Մենք ռազմաճակատից ուղղակի ստացված տեղեկություններ ունենք, տեսնում էինք, որ իրավիճակն օր օրի վատթարանում էր: Նաեւ պետք է հիշեցնել, որ պատերազմի օրերին 33 կառավարության «միսիոներները» ԱՀ նախագահի մոտ կարծես հերթապահություն էին սահմանել եւ, փաստորեն, սահմանափակել

«Նիկոլի գծից շեղման» հնարավորությունը:

Մենք մի քանի անգամ փորձեցինք խորհրդարանական հարթակն օգտագործելով՝ հանդիպել 33 ղեկավարության հետ: Այդ ընթացքում պարզվեց, որ Արցախի իշխանությունները, հատկապես գործադիր իշխանության մասով, լայն լիազորություններ չունեն: Բայց այդ փորձերը հաջողություն չունեցան:



- Արցախյան առաջին պատերազմում 337-ն առանցքային դերակատարություն ունեւ Արցախում եւ Հայաստանում, իսկ վերջին պատերազմի ժամանակ ընդդիմության կարգավիճակում էր: Որպես առաջին պատերազմի հաղթանակին նպաստած կուսակցություն՝ այս անգամ ինչպե՞ս է օգտագործվել 337-ի ներուժը:

- Ոչ միայն 337-ի, այլեւ ողջ հայ ազգի ներուժը համապատասխան ձևով չի օգտագործվել: Դրան նպաստել են նաեւ իմ հիշատակած բաժանարար գծերը, որ վերջին երեք տարիների ընթացքում Նիկոլ Փաշինյանի իշխանությունը ներդրել էր: Բայց, չնայած դրան, ի տարբերություն իշխանությունների, հայությունն ինչքան հնարավոր էր՝ համախմբվել էր:

Ինչ վերաբերում է Դաշնակցությանը, ապա նրա գործունեությունը պատերազմի օրերին կարելի է բաժանել երկու մասի՝ ռազմական ու քաղաքական: Հասկանալի է, որ Արցախի կառույցը Պաշտպանության բանակից առանձին չի գործել, եւ մեր ընկերները ՊԲ-ի շարքերում եւ նրա կողքին կատարել են իրենց քաղաքացիական պարտքը: 44-օրյա պատերազմի օրերին Արցախի կառույցից 5 կուսակցական ու մեկ տասնյակից ավելի համակիր ընկերներ են նահատակվել: Իսկ 337 Հայաստանի կառույցը «Կամավորական շարժում» հասարակական կազմակերպության միջոցով վաշտեր է մարզել եւ ուղարկել ռազմաճակատ: 500 հոգուց բաղկացած այդ գումարտակը կատարի մարտեր է մղել Արցախի հյուսիսային հատվածներում, հետ մղել թշնամու հարձակումները, հակահարձակման շնորհիվ ազատագրել ռազմավարական մեծ նշանակություն ունեցող բարձունք: Ցավոք, կամավորական գումարտակը եւս ծանր կորուստներ ունեցավ:

Քաղաքական առումով, 337-ն Հայ Դատի գրասենյակների եւ երիտասարդական միությունների միջոցով իրազեկման ակցիաներ, ցույցեր է կազմակերպել Սփյուռքում՝ նպատակ ունենալով ի ցույց դնել ազդեցություն կողմի գործողությունները: Դրան գուցա հեռ, Դաշնակցության ուղեկից գրասենյակները հարյուրավոր նամակներ են հղել միջազգային տարբեր շրջանակների՝ պահանջելով դատապարտել Ադրբեյջանի ագրեսիան եւ միջազգային հանրության մոտ պարզաբանելով Ադրբեյջանի ոճրագործությունները:

Կարելի է ասել, որ ինչպես Արցախյան առաջին պատերազմի, այնպես էլ 44-օրյա պատերազմի օրերին 337-ն իր ամբողջ ներուժն է գործադրել ենթարկել: Սակայն ելակետային պայմաններն անբավարար էին, եւ 337-ն պետական մակարդակով որոշումների կայացմանը չէր մասնակցում:

- Դուք Ձեր հարցազրույցներում նշել եք, որ իշխանությունները սոցիալական անեթաթեզիայի տակ են պահում ժողովրդին: Սոցիալական ծրագրերը առաջնային չեն՝ համարում:

- Սոցիալական ծրագրերը միշտ էլ կարելու են, մանավանդ՝ հետպատերազմյան շրջանում, երբ երկրում հումանիտար աղետ է տիրում: Սակայն առաջնային այլ մարտահրավերներ են կանգնած Արցախի առաջ: Ամենաառաջինն անվտանգությունն է, երկրորդը՝ կարգավիճակի հարցը: Արցախի Պաշտպանության բանակը եւս նույն խաղաղապահներն այսօր ապահովում են մեր անվտանգությունը: Մենք պետք է կարողանանք կարճ ժամկետում վերականգնել Պաշտպանության բանակը: Մեր խորին համոզմամբ, Արցախի զինված ուժերն են, որ կարող են եւ պետք է իրականացնեն զուգահեռաբար ապահովել եւս սակայն այս ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվում:

Իհարկե, կարելու է բռնի տեղահանվածների եւ պատերազմից տուժած մյուս քաղաքացիների սոցիալական խնդիրները լուծումը, բայց պետական համակարգի ողջ ներուժը կենտրոնացնել դրա վրա՝ չվարելով արտաքին քաղաքականություն, հոգ չտանելով անվտանգության մասին, հեռանկարային չէ:

- Ինչպե՞ս է հնարավոր Արցախը ու Հայաստանը նորից վերածել տարածաշրջանային գործոնի:

- Մեզ միասնականություն է անհրաժեշտ: Նախ՝ ազգին պարտության հասցրած ուժերը պետք է հեռանան, որպեսզի ժողովուրդը կարողանա մեքեն ուղղել: Պետք է իրական, քննիչ հանձնաժողով ստեղծվի՝ ոչ այս իշխանությունների կողմից: Պատերազմի օրերին եւ դրանից հետո ծագած առեղծվածային հարցերին պետք է հստակ պատասխան տրվի: Մեղավորները պետք է պատժվեն, «Հայկական Նյուրեբերգ» պետք է լինի, որից հետո միասնական մթնոլորտում հնարավոր կլինի բոլոր հարցերը լուծել:

Արցախը հայության միասնության խորհրդանիշն է՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության առանցքային մասնիկը: Այս պատերազմում ոչ միայն Արցախը, այլ ամբողջ հայ ազգն է պարտվել եւ, հետեւաբար, շատ կարելու է այդ պարտության պատճառների ուսումնասիրումը, հետաքննությունը ու իրական պատկերը ներկայացնելը: Միայն այդ դեպքում կարելի կլինի վերականգնել եռամիասնության գաղափարը, իսկ այս եռամիասնությամբ է, որ Հայաստանն ու Արցախը կարող են դառնալ տարածաշրջանային գործոն: Դրա համար քրտնաջան աշխատանք է պետք, որի համար քիչ ժամանակ ունենք:

- Նոյեմբերի 9-ի հայտարարությունը որակվում է որպես կապիտուլյացիայի ակտ: Դուք ինչպե՞ս եք գնահատում այն եւ ի՞նչ կանխատեսումներ ունեք: Արդյո՞ք մեզ առավել ծանր պայմաններով նոր փաստաթղթի ստորագրում է սպասվում:

- Քանի դեռ այս իշխանությունը Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ գոյություն ունի, մեզ ամեն օր, ամեն ժամ նորանոր պարտություններ ու կապիտուլյացիայի ակտեր են սպասվում: Պատերազմից մեկ տարի է անցել եւ գործուն քայլեր չեն ձեռնարկվել սահմանների ամրապնդման եւ

բանակի հզորացման համար: Իշխանությունները սեփական մեղքը եւ ապիկարությունը թաքցնելու համար զբաղված են մեղավորների փնտրտուքով: Քանի սրանք կան, մեր հիասթափությունները կլինեն շարունակական: Դրանք կարող են դրսևորվել թե՛ բանավոր պայմանավորվածություններով եւ թե՛ գործնականում ոչինչ չանելով ու հողմներ անելով խորհրդային ժամանակների ինչ-որ քարտեզների: Դրանք բոլորն անձնատվության դրսևորումներ են:

- «Արցախն ու 337-ն բնական դաշնակիցներ են»: Այս գաղափարը տարիներ շարունակ ինչեցվել է Դաշնակցության մամուլում եւ պատասխանատու անձանց կողմից: Արդյո՞ք այն ներկայումս արդիական է, եւ ինչպե՞ս կմեկնաբանեք դա ընդդիմադիր դիրքերից հանդես եկող 337-ի պարագայում:

- Ընդդիմադիր դաշտում, թե իշխանության մեջ Դաշնակցությունը միշտ էլ հանդես է եկել պետականամետ դիրքերից: Հնարավոր է Դաշնակցությունն իշխանության կողքին չլինի, բայց միշտ պետության կողքին է: Վերջին պատերազմը ցույց տվեց, որ 33 իշխանությունները պետության եւ բանակի կողքին չեն:

Ինչ վերաբերում է «Արցախն ու 337-ն բնական դաշնակիցներ են» գաղափարին, պետք է ասել, որ սրանք լոկ խոսքեր կամ գեղեցիկ բառերի շարան չեն: Պատահական չէ, որ մեր ծրագիրը եւ Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ընթացքում արժարժվող մոտեցումները նույն գաղափարական ելակետներից են բխում: Հնարավոր է ինչ-որ ժամանակահատվածում Դաշնակցության ազդեցությունն ավելանա կամ նվազի, սակայն դրանից Երևանը չի փոխվում: Այս գաղափարական գույակցումն արտացոլվում է Արցախի պետական համակարգում Դաշնակցության ջնդհատվող ներկայությամբ: Այստեղ մեկ անգամ եւս ցանկանում են շեշտել կարելու չէ Դաշնակցությունն իշխանության մաս է, թե ընդդիմություն, առանցքային պետական հարցերում Դաշնակցության կշիռն ու դերակատարությունը միշտ էլ զգացվել է:

- Պատերազմից հետո ինչպիսի՞ն է 337-ի տեսլականը Արցախյան հիմնահարցի լուծման առումով:

- Մեր դիտարկումներից պետության դերն այս պայմաններում ավելի շեշտակի է դառնում: Պետությունը պետք է ժողովրդին հավատ ներշնչի, որպեսզի վերջինս կարողանա ուղղել իր ծոված մեքեն, պետք է բանակը զորացվի: Ամեն ինչ պետք է անել, որ Արցախը չհայաթափվի: Արցախցին պետք է մնա Արցախում՝ անկախ Ադրբեյջանի կողմից գործադրվող հոգեբանական եւ այլ ճնշումների: Մենք սրանից ավելի վատ պայմանների ենք դիմագրավել եւ պետք է պատրաստ լինենք նոր դժվարությունների հաղթահարմանը, մինչեւ հարցի վերջնական լուծումը:

Պետք է շարունակել ապրել, արարել Արցախում: Իսկ սրան գուցա հեռ՝ կարելու պայման է նաեւ սոցիալական արդարության հաստատումը: Իսկ արտաքին քաղաքականության հիմնական առանցքը պետք է դառնա Արցախի անկախության ճանաչումը: Մեր պետականության հիմնասյունը պետք է ամուր պահել, դա մեր ինքնորոշման իրավունքի իրացումն է, որն արտացոլվել է անկախության կամքի դրսևորմամբ՝ հանրաքվեի միջոցով եւ սրբադասվել մեր գոհերի արյամբ:

Մեր համոզմամբ՝ ավելի քան 30 տարիների ընթացքում մեր հայրերի, եղբայրների, քույրերի եւ զավակների թափած արյունն ու քրտինքը մեր պետականության գոյությամբ է իմաստավորվում: Ամեն գնով պետք է պահպանվի Արցախի անկախությունը: Սրանում պետք է համոզված լինի Արցախի քաղաքացին, Հայաստանի քաղաքացին եւ համայն հայությունը:

Հարցազրույցը՝ Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆԻ

Պատգամավորների հարցերը՝ կառավարության անդամներին

Լոյտմբերի 25-ին կայացել է ԱԶ Ազգային ժողովի հերթական նիստը, որի օրակարգում ընդգրկված էր նաև կառավարության անդամներին ու նախագահին հարցերի ուղղման բաժինը:

12 պատգամավորներ 22 հարց ուղղեցին կառավարության անդամներին: Հարցերը վերաբերում էին բնակարանաշինության ու բնակչահագործման ժամկետներին, ներհանրապետական երթուղիների շահագործմանը, համավարակով պայմանավորված՝ համապետական կարանտինի արդյունավետ կիրառմանն ու իրավիճակով պայմանավորված՝ կրթության կազմակերպման խնդիրներին, հանրապետությունում վարկավորման գործընթացին, արտաքին քաղաքականությանը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տեխնոլոգիաների բացմանը եւ այլն:

«Սոչիում եւ Բոյուսելում կայանալիք հանդիպումներում հիմնական շեշտը դրվելու է տարածաշրջանում կայունության պահպանման վրա. չի բացառվում, որ դեմարկացիայի, դելիմիտացիայի կապակցությամբ հանձնաժողով ստեղծվի: Բայց պետք է հասկանալ, որ սա բարդ գործընթաց է եւ տարիներ շարունակ ընթանալու է»,- նշել է ԱԶ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը՝ պատասխանելով պատգամավոր Կարեն Դովհանիսյանի հարցին:

Պատգամավորը հետաքրքրվել էր՝ արդյո՞ք ԱԶ ԱԳՆ-ն համապատասխան ազդանշաններ ունի Լոյտմբերի 26-ին Սոչիում կայանալիք՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի միջեւ հանդիպման եւ որոշ ժամանակ հետո Բոյուսելում Եվրամիության Արեւելյան գործընկերության զագաթնաժողովի շրջանակներում նախատեսվող Փաշինյան-Ալիև հանդիպման առումով, եւ արդյո՞ք հնարավոր զարգացումների դեպքում գործողությունների պլան ունեն:

Ի պատասխան՝ Դավիթ Բաբայանն ասել է, որ հետեւում են այդ գործընթացներին: «Մենք Ադրբեջանի հետ մեկ ընդհանուր պետության կազմում որեւէ տարբերակ չենք ընդունելու: Բացի դրանից, չենք հրաժարվելու նաեւ դեֆոլտացիայի հիմնախնդրից, որը դարձել է մեր

արտաքին քաղաքականության կարեւորագույն ուղղություններից մեկը: Մեզ համար Շուշին, Հադրուբը, Զարվաճառը եւ մնացած բնակավայրերն ու տարածքները հանդիսանում են մեր երկրի անքակտելի մասը»,- ավելացրել է ԱԶ արտաքին գործերի նախարարը:

ԱԶ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը, պատասխանելով պատգամավոր Գեղամ Ստեփանյանի հարցին, նշել է, որ համավարակի պատճառով զոհ է դարձել կրթության համակարգը:



«Կրթական համակարգը իրեն ցայտոր գոհում է, որպեսզի ինչ-որ բան փոխվի կորոնավիրուսի ցուցանիշների պատկերում: Ցավում եմ, որ մնացած ուղորտները կամ բարեխիղճ չեն, կամ կրավորական կեցվածք են ընդունել: Մեր միակ այլընտրանքն առցանց ուսուցումն է, որտեղ խնդիրներ են ծագել՝ կապված ինտերնետ կապի հզորության հետ: Ոչ թե ինտերնետ կապն է վատ Արցախում, սա թյուր կարծիք է, պարզապես ծնողները ձրի կապից են օգտվում, որի պատճառով ընդհատումներ են լինում»,- ասել է նախարարը՝ ծնողներին կոչ անելով ձեռք բերել ավելի արագ ինտերնետային փաթեթներ, որպեսզի առ-

ցանց դասերը չտապալվեն:

Լուսինե Ղարախանյանի խոսքով՝ մինչեւ հիմա շրջանների համայնքներում հիմնականում դասագործընթացը չեն ընդհատել. միայն Հարությունազումբում է դպրոցը փակվել: Կորոնավիրուսով վարակված են 5 ուսուցիչներ, 4-ն էլ մեկուսացված՝ թեստի բացասական պատասխանով:

«Բարձրագույն կրթության համակարգում ԱրԴՅ-ն ձեռք է բերել «Class room» հարթակ, որտեղ վերահսկելն էլ է հնարավոր, եւ ամենի ինչ անխափան աշխատում է: Իսկ մյուս բուհերը տվյալ հարթակը ձեռք չեն բերել»,- տեղեկացրել է ԱԶ ԿԳՄՍ նախարարը:

Նա նաեւ նշել է, որ 138 աշակերտի գործեր դուրս են բերվել Արցախի դպրոցներից, իսկ վերջին ամսում Շահումյանի, Հադրուբի եւ Շուշի շրջաններից 20 աշակերտ է վերադարձել Արցախ: Արցախի հանրակրթական դպրոցներում ներկայումս սովորում է 19340 աշակերտ:

Գեղամ Ստեփանյանը հարց է ուղղել նաեւ քաղաքացիական պաշտպանության ոլորտին հատկացված 1 մլրդ դրամ գումարի օգտագործման մասին:

ԱԶ պետական նախարար Արտակ Բեգլարյանն՝ ի պատասխան նշել է, որ այդ գումարի մոտավոր 40 տոկոսը ծախսված է, կամ ծախսման փուլում է, բայց մինչեւ տարեվերջ լրացուցիչ ծախսեր են պլանավորվում են: «Հիմնական խնդիրը պլանավորումն էր, որպեսզի նպատակային ծախսեր իրականացնենք ապաստարանների եւ այլ համակարգերի մասով: Արդեն որոշակի ճշգրտումներ ունենք, ընթացում բանակցություններ ենք ունեցել տարբեր արտադրողների հետ: Կարծում եմ՝ մինչեւ տարեվերջ ծախսերի հիմնական մասը կկատարենք: Բայց հաջորդ տարի միանշանակ ավելի պատրաստ ենք լինելու՝ հիմնավոր ռազմավարական լուծումներ գտնել, եւ նախատեսված 1 մլրդը նույնիսկ կարող է չբավարարել»,- ասել է Ա. Բեգլարյանը:

Գեղամ Ստեփանյանն առաջարկել է այդ քննարկումներին նաեւ օրենսդիր ընդգրկել, ինչին Արտակ Բեգլարյանը դրական է արձագանքել:

Տարեկի ԱՄԱՁԱՆՅԱՆ

2022թ. բյուջեի նախագիծը ներկայացվել է Ազգային ժողովին

Լոյտմբերի 26-ին «ԱԶ 2022թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԶ ԱԺ մշտական հանձնաժողովներին եւ խմբակցություններին:

Նախագիծը լիազորված էր ներկայացնել ԱԶ ֆինանսների նախարար Վահրամ Բաղդասարյանը: Նրա խոսքով, այն մշակվել է՝ հաշվի առնելով համաճարակի եւ 2020թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի բացասական հետեւանքները, ինչպես նաեւ պետության առջեւ ծառայած մարտահրավերները:

«2022թ. Արցախի Հանրապետության գերխնդիրներ են հանդիսանալու բնակչության անվտանգության ապահովումը, կայուն տնտեսական աճ ապահովող եւ տնտեսության արագ զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացումը, մեր քաղաքացիների բարեկեցիկ կյանքով ապահովելու հնարավորությունների եւ կարողությունների ընդլայնումը, պետականաշինությունը եւ պաշտպանության ոլորտում ապահովող ինստիտուտների զարգացումը: 2021թ. մակրոտնտեսական ցուցանիշների զարգացումները թույլ են տալիս 2021թ. համար ակնկալել անկման տեմպերի ավելի փոքր չափ, քան ծրագրվել է 2021թ. պետական բյուջեի ներկայացման ժամանակ: Ըստ մեր կանխատեսումների, 2021թ. համախառն ներքին արդյունքը կկազմի 236.5 մլրդ դրամ՝ հանգեցնելով շուրջ 17.3% տնտեսական անկման»,- իր ելույթում նշել է ֆինանսների նախարարը:

2022թ. համար կանխատեսումային ՀՆԱ-ի ծավալը կկազմի 263.7 մլրդ դրամ, աճը կանխատեսվում է մոտ 8%: Չնայած ցուցանիշը կանխատեսվել է 3%-ի սահմաններում՝ 1% տատանման թույլատրելի միջակայքում:

2022թ. պետական բյուջեի ցուցանիշները հետեւյալն են. եկամուտներ՝ 184 մլրդ 300 մլն դրամ, ծախսեր՝ 214 մլրդ 662,3 մլն դրամ: Դեֆիցիտը կկազմի 30 մլրդ 362,3 մլն դրամ, որը, ըստ նախագծի, կֆինանս-

ավորվի փոխառու միջոցների հաշվին:

Պետական բյուջեի սեփական եկամուտները ծրագրվել են 40.3 մլրդ դրամի չափով, որից հարկային եկամուտների եւ պետական տուրքերը կկազմեն 40 մլրդ դրամ կամ 2021թ. համար պլանավորված եկամուտներից շուրջ 2.4 անգամ եւ սպասվող եկամուտներից 33% ավել: Բյուջետային վարկի չափը 2022թ. կկազմի 114 մլրդ դրամ կամ 2021թ. համար հաստատված ցուցանիշի համեմատ 79 մլրդ 219,3 մլն դրամով ավել: 2021թ. ՀՀ-ի



կողմից, որպես բյուջետային վարկ, լրացուցիչ տրամադրվել է 63.9 մլրդ դրամ եւ այսօրվա դրությամբ այն կազմում 128.7 մլրդ դրամ:

2022թ. պետական բյուջեի ծախսերը նախատեսվում են 214 մլրդ 662.3 մլն դրամի չափով, որը 2021թ. հաստատված պետական բյուջեի ծախսերը գերազանցում է 66.2%-ով: 2022թ. պետական բյուջեի հիմնական ծախսային գերակայությունները, ըստ ոլորտների, հետեւյալն են՝ գյուղատնտեսություն՝ 6 մլրդ 139,7 մլն դրամ, տնտեսական զարգացման ծրագրեր՝ 366,8 մլն դրամ, Արցախի ներդրումային հիմնադրամ՝ 4.0 մլրդ դրամ, կապի-

տալ ներդրումներ՝ 34,5 մլրդ դրամ, սոցիալական պաշտպանություն՝ 52 մլրդ 564.2 մլն դրամ, առողջապահություն՝ 15 մլրդ 500,0 մլն դրամ, կրթություն՝ 17 մլրդ 264,1 մլն դրամ, մշակույթ, երիտասարդություն եւ սպորտ՝ 1 մլրդ 918,0 մլն դրամ, համայնքների բյուջեներ՝ 4 մլրդ 090,7 մլն դրամ: ԱԶ բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման համար, «Էլեկտրաէներգիայի, գազաֆիկացման, կապի ծառայությունների սուբսիդավորում» ծրագրի ծախսերը կկազմեն 7 մլրդ 800,0 մլն դրամ / 2022թ. հունվարի 1-ից մինչեւ մարտի 1-ը/:

Սոցիալական պաշտպանության ոլորտը բյուջեի ծախսային կառուցվածքում մամեմամեմ մասնաբաժին ունեցող է, ընդհանուր ծախսերի մոտ 24.5%: Դա բացատրվում է նրանով, որ 2022թ. հունվարի 1-ից նախատեսվում է 20%-ով բարձրացնել աշխատանքային, սոցիալական, սպայական, ինչպես նաեւ շարքային կազմի զինծառայողների կենսաթոշակների չափերը, պետական կենսաթոշակի նվազագույն չափը: Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար սահմանված հիմնական կենսաթոշակի չափը նախատեսվում է սահմանել 21500 դրամ՝ 18000 դրամի դիմաց, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը առաջին 10 տարվա համար նախատեսվում է սահմանել 1150 դրամ՝ 950 դրամի դիմաց, իսկ 10 տարին գերազանցող յուրաքանչյուր

տարվա համար 600 դրամ՝ 500 դրամի դիմաց: Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը կկազմի 56200 դրամ՝ 2021թ. 46800 դրամի դիմաց:

Ծնելիությունը խթանելու եւ բազմազավակ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2022թ. հունվարի 1-ից հետո ընտանիքում երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնողին կնշանակվի եւ մինչեւ երեխայի 6 տարեկանը լրանալը կվճարվի դրամական աջակցություն՝ ամսական 50000 դրամի չափով:

Հանրակրթական դպրոցների ծախսերի իրականացմանն ուղղվելու է 10 մլրդ 764.8 մլն դրամ, որը 2021թ. համապատասխան ցուցանիշի համեմատ ավել է 1 մլրդ 335.8 մլն դրամով: Այն պայմանավորված է գյուղական համայնքներում երկարաժամկետ դպրոցների ներդրմամբ, Ստեփանակերտ քաղաքում Շիրակացու ճեմարան միջազգային գիտակրթական համալիրի բացմամբ, 2022թ. հունվարի 1-ից մամեմամեմ մասնաբաժին ունեցող է, ընդհանուր ծախսերի մոտ 24.5%: Դա բացատրվում է նրանով, որ 2022թ. հունվարի 1-ից նախատեսվում է 20%-ով բարձրացնել աշխատանքային, սոցիալական, սպայական, ինչպես նաեւ շարքային կազմի զինծառայողների կենսաթոշակների չափերը, պետական կենսաթոշակի նվազագույն չափը: Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար սահմանված հիմնական կենսաթոշակի չափը նախատեսվում է սահմանել 21500 դրամ՝ 18000 դրամի դիմաց, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը առաջին 10 տարվա համար նախատեսվում է սահմանել 1150 դրամ՝ 950 դրամի դիմաց, իսկ 10 տարին գերազանցող յուրաքանչյուր

տարվա համար 600 դրամ՝ 500 դրամի դիմաց: Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը կկազմի 56200 դրամ՝ 2021թ. 46800 դրամի դիմաց:

Ծնելիությունը խթանելու եւ բազմազավակ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2022թ. հունվարի 1-ից հետո ընտանիքում երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնողին կնշանակվի եւ մինչեւ երեխայի 6 տարեկանը լրանալը կվճարվի դրամական աջակցություն՝ ամսական 50000 դրամի չափով:

Հանրակրթական դպրոցների ծախսերի իրականացմանն ուղղվելու է 10 մլրդ 764.8 մլն դրամ, որը 2021թ. համապատասխան ցուցանիշի համեմատ ավել է 1 մլրդ 335.8 մլն դրամով: Այն պայմանավորված է գյուղական համայնքներում երկարաժամկետ դպրոցների ներդրմամբ, Ստեփանակերտ քաղաքում Շիրակացու ճեմարան միջազգային գիտակրթական համալիրի բացմամբ, 2022թ. հունվարի 1-ից մամեմամեմ մասնաբաժին ունեցող է, ընդհանուր ծախսերի մոտ 24.5%: Դա բացատրվում է նրանով, որ 2022թ. հունվարի 1-ից նախատեսվում է 20%-ով բարձրացնել աշխատանքային, սոցիալական, սպայական, ինչպես նաեւ շարքային կազմի զինծառայողների կենսաթոշակների չափերը, պետական կենսաթոշակի նվազագույն չափը: Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար սահմանված հիմնական կենսաթոշակի չափը նախատեսվում է սահմանել 21500 դրամ՝ 18000 դրամի դիմաց, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը առաջին 10 տարվա համար նախատեսվում է սահմանել 1150 դրամ՝ 950 դրամի դիմաց, իսկ 10 տարին գերազանցող յուրաքանչյուր

S. ԱՄԱՁԱՆՅԱՆ

Սոչիից Սյունիք. Սահմանազատում եւ սահմանանշում

Վերջերս Սոչիում ստորագրվեց հերթական եռակողմ հայտարարությունը, որին մեծ անդրադարձ կատարվեց հայ հանրության կողմից, սակայն երկու կարեւոր հանգամանք կարծես թե դուրս մնաց բոլորիս ուշադրությունից:

Այդ փաստաթղթում կար երկու կարեւոր կետ, որին համարյա անդրադարձ չի եղել հայ վերլուծական շրջանակների կողմից կամ մակերեսորեն է անդրադարձ կատարվել: Նախ՝ սա երեւի միակ փաստաթուղթն է, որտեղ որեւէ հիշատակում չկա Արցախի մասին: Կարծում եմ՝ սա մեծ վնաս կարող է հասցնել Արցախի հարցի կարգավորման գործընթացին: Այդ համատեքստում հարկ է նաեւ հիշել Նիկոլ Փաշինյանի մեկ այլ հայտարարություն, որն այդպէս էլ անարձագանք մնաց: Նա ԱԾ-ում հայտարարեց, որ Արցախի հարցում չենք կարող ունենալ հայաստանյայտ լուծում, սա մենք ենք պետք է տողատակերով հասկանանք: Այսինքն, այդ մարդն ասում է, որ Արցախի հարցում հայաստանյայտ միակ լուծումը՝ Ադրբեջանից անջատ կարգավիճակը, չի կարող լինել: Այստեղ տեսնում ենք, որ ՀՀ իշխանության համար Արցախի հայաստանյայտ լուծումը փակված թեմա է, ինչպէս Ալիեւն է ասում՝ այլեւս նման խնդիր չկա:

Երկրորդ կետը վերաբերում է դեմարկացիայի եւ դելիմիտացիայի հանձնաժողով ստեղծելուն: Այդ հարցի մասին նույնիսկ տարրական գիտելիքներ ունեցողները գիտեն, որ դելիմիտացիան իրականացվում է պայմանագրի հիման վրա, այսինքն՝ կնքվում է պայմանագիր, որտեղ լինում են քարտեզներ՝ գծանշումներով եւ այլն, դրանից հետո կազմվում է հանձնաժողով, որից հետո սկսվում են դեմարկացիայի եւ դելիմիտացիայի աշխատանքները: Հիմա եթե պայմանագիր չկա, ինչի՞ հիման վրա է ստեղծվում հանձնաժողով: Ընդ որում, դելիմիտացիայի պայմանագիրը հաճախ խաղաղության պայմանագրի մաս է կազմում: Արդյո՞ք Հայաստանը նման մտադրություն ունի՝ Ադրբեջանի հետ կնքել «խաղաղության պայմանագիր», այն էլ՝ Ալիեւի պահանջներով: Դելիմիտացիայի վերաբերյալ ցանկացած պայմանագիր անչեղում է տարածքային ամբողջականությանը: Հիմա որքան էլ փորձեն պնդել, որ դելիմիտացիան առանձին գործընթաց է եւ Արցախի հարցի հետ կապ չունի, այդպէս չէ: Հիմա ստեղծված իրավիճակում մեզ պետք է լուրջ դիվանագիտություն, որտեղ յուրաքանչյուր խոսք չափված ու ձեւավորված կլինի:

Մտավախությունն էլ ավելի ահազանգացավ, երբ Փաշինյանն իր վերջին ասուլիսի ժամանակ Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչեց ու Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման հարցերին հստակ ժխտական պատասխան չտվեց ու մանիպուլյացիաներով ու անհասկանալի ինչ որ ձեւակերպումներով շեղեց հարցը:

Ավելին, Փաշինյանն այն կապեց պատերազմի հետ՝ նշելով, որ «եթե մենք Ղարաբաղը հանձնող լինեինք, պատերազմ չէր լինի», ու հավելեց, որ պատերազմի առաջին օրն ասել է, որ կարող ենք կանգնեցնել պատերազմը՝ պայմանով, որ Ղարաբաղը ինչ-որ ինքնավար մարզի կարգավիճակով կլինի Ադրբեջանի կազմում: Սա ոչ այլ ինչ է, քան հստակ մեսիջ միջազգային հանրությանը, որ պատերազմով Ադրբեջանը վերցրել է ամբողջ Արցախը, ու համաձայնում Ալիեւի այն մտքերի հետ, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի հարցն արդեն լուծել է պատերազմով, եւ այն, ինչ հետագայում կլինի, պարզապէս պատերազմի արդյունքների արձանագրում կլինի, որը տարածվում է նաեւ Արցախի մնացած տարածքների վրա: Սա նաեւ օվերտոնի պատուհան է մեր հանրության համար, այսինքն՝ հանրային քննարկման ու դիսկուսի առարկա է դարձնում ամբողջ Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու հնարավորությունը, այսպէս ասած՝ Ադրբեջանի կազմում ինքնավարությունը:

Այդ մարդն անընդհատ ասում է, որ Հայաստանի սահմանների սահմանազատումը Ղարաբաղի հարցի հետ որեւէ կապ չունի ու չպետք է վախենալ դեմարկացիայից ու դելիմիտացիայից, որ իբր դրանք տարբեր հարցեր են, բայց, միեւնոյն ժամանակ, ինքն ու իր կառավարությունը միտումնավոր թաքցնում են հանրությունից, թե ինչ է ընդհանրապէս սահմանազատումը ու ինչ վտանգներ է պարունակում այն մեր կենսական շահերի համար, ինչի արդյունքում մեր հանրությունն այդպէս էլ չհասկացավ, թե ինչ է սահմանազատումը եւ, ընդհանրապէս, ինչ է պետական սահմանը: Ու բոլորը, անխտիր բոլորը՝ ընդ որում տարբեր ճամբարներից, շեղում են հասարակությանը իրական վտանգներից՝ առաջին պլան բերելով կեղծ օրակարգեր:

Այժմ կետ առ կետ ներկայացնեմ ձեզ ողջ խնդիրը, թե ինչ է իրականում պատրաստվում անել Նիկոլը ու ինչ վտանգների առաջ ենք մենք կանգնելու:

1. ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԱՏՈՒՄ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՆՈՒՅՈՒՄԻ ՈՒՂՂԱՀԱՅԱԳ ԱՆՍՆՈՂ ԱՅՆ ԳԾԵՐՆ ԵՆ, որոնք որոշում են պետության տարածքի սահմանները, որից ներս տարածվում է տվյալ պետության իրավագործության՝ այսինքն պետական ինքնիշխանության գործողության տարածական սահմանները:

2. ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՉԻՆՈՒԹՅՈՒՆԸ կամ ԻՆՔՆԻՉ-

ԻՆՈՒԹՅՈՒՆԸ միջազգային իրավունքում հակիրճ ձեւակերպվում է հետեւյալ կերպ. դա ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ է երկրում, այսինքն՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՆՅՈՒԹՅՈՒՆԸ ներքին գործերում եւ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ արտաքին գործերում:

3. Ինչ է նշանակում ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ հասկացությունը: Այն ունի չորս հիմնական հատկանիշներ՝ միասնականություն (կամ անբաժանելիություն), անսահմանափակություն, լիարժեքություն ու մշտականություն եւ անընդհատություն: Այս չորսից անդրադառնանք երկուսին՝ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ու ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅԱՆԸ, մյուսներն ինքնին հասկանալի են:

4. ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ բնութագրվում է հետեւյալ կերպ. պետական իշխանությունն իր էության միշտ միակն է եւ այն չի կարող թույլ տալ այլ իշխանության գոյությունը իր տարածքում գտնվող անձանց նկատմամբ: ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ՝ դա նշանակում է, որ տվյալ պետության սահմաններից ներս չի կարող լինել այլ իշխանություն, որը չի ենթարկվում գերագույն իշխանությանը:

5. ԴԵԼԻՄԻՏԱԿԱՆ ՈՒ ԴԵՄԱՐԿԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ.

Որպես կանոն, պետական սահմանը հաստատվում է հարեան պետությունների միջեւ պայմանագրերի հիման վրա՝ միջազգային իրավունքի համաձայն: ԴԵԼԻՄԻՏԱԿԱՆ կամ ՍԱՀՄԱՆԱԳԱՏՈՒՄԸ սովորա-



բար հանդիսանում է խաղաղության պայմանագրերի կամ պետական սահմանների հաստատման, փոփոխման վերաբերյալ հատուկ պայմանագրերի բաղկացուցիչ մասը:

Սահմանազատման ընթացքում պայմանագրի կողմերը, որպես կանոն, քարտեզի վրա՝ առանց երկրի մակերեսային վրա աշխատանքներ կատարելու, կազմում են սահմանային գծի անցկացման նկարագրությունը: Վերոնշյալ քարտեզը պայմանագրում կարող է լինել առանձին հոդվածի կամ հավելվածի տեսքով: Սահմանները գծվում են աշխարհագրական քարտեզի վրա, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մասը: Իսկ ԴԵՄԱՐԿԱՑԻԱՆ արդեն դելիմիտացիայի պայմանագրում նշված աշխատանքների իրականացումն է տեղում՝ երկրի մակերեսային վրա:

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ ինչպես պնդումները, որ որեւէ պայմանագիր չի ստորագրվել ու պարզապէս դելիմիտացիա սկսելու մասին պայմանավորվածություններ են եղել, պարզապէս իրական է, քանի որ հասկանալի է, որ առանց պայմանագրի հնարավոր չէ սկսել դելիմիտացիա: Ընդ որում, այդ պայմանագիրը կարող է լինել Ալիեւի կողմից բազմիցս նշված խաղաղության պայմանագիրը, քանի որ դելիմիտացիայի պայմանագիրը հաճախ խաղաղության պայմանագրի մաս է կազմում, նամանավանդ՝ հակամարտող կողմերի դեպքում:

Դելիմիտացիան ու դեմարկացիան սովորական գործողությունն է, կամ պարզապէս սահմանների գծագրում չէ, ինչպէս փորձում են մեզ հրամսել ու համոզել, այլեւ՝ իրավական մեխանիզմներ, որն ուղղակի կերպով փոխկապակցված է Արցախի հարցի, Արցախի պետականության, Արցախի ժողովրդի կյանքի իրավունքի, անվտանգության, ապագայի հետ: Սահմանների մասին ստորագրված կամ ստորագրվելիք ցանկացած փաստաթուղթ, որտեղ կբացակայի եւ հատուկ չի շեշտադրվի արցախահայության արդեն իսկ իրագործված ինքնորոշման իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, ինքնին ուղղակի կերպով կնշանակի Արցախի լրիվությամբ հանձնում Ադրբեջանի իրավագործությանը (տեսեք վերը շարադրված 4 կետերը):

Այստեղ ցանկանում եմ ուշադրություն հրավիրել նաեւ ՀՀ ԱԳՆ նախկին նախարար Արա Այվազյանի հայտնի հայտարարությունը «հայ ժողովրդի շահերին հակասող» գործողությունների վերաբերյալ: Եթե նկատել եք, Այվազյանի ԱԳՆ-ն այն ժամանակ շեշտում էր, որ սահմանազատումը պետք է կատարվի Արցախի հարցի համատեքստում, իսկ Փաշինյանը նշում էր, որ Արցախի հարցը կապված չէ սահմանազատման հետ եւ խոսում է միայն

«Հայաստանի Հանրապետության շահերին համապատասխանող» պայմանագրից:

Սահմանների մասին փաստաթղթի ստորագրումը կհանդիսանա նաեւ Արցախի պետականության ոչնչացում, քանի որ Հայաստանը ճանաչելով Ադրբեջանի սահմանները, իսկ դելիմիտացիան ու դեմարկացիան ոչ այլ ինչ են, քան միմյանց սահմանների ճանաչում, ուստի այն կնշանակի նաեւ տվյալ սահմաններից ներս գտնվող տարածքում Ադրբեջանի ինքնիշխանության եւ իրավագործության ճանաչում (տես՝ կետ 1,2), իսկ պետական ինքնիշխանությունը չի կարող թույլ տալ իր տարածքում այլ իշխանության գոյությունը (տես՝ կետ 4), ուստի սահմանների վերաբերյալ փաստաթղթի ստորագրումը՝ առանց արցախահայության ինքնորոշման իրավունքի մասին նշելու, իրավական տեսանկյունից կնշանակի Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության պետականության փաստացի ոչնչացում եւ այդ տարածքների հանձնում Ադրբեջանի իրավագործությանը:

ԻՆՉ ԿԼԻՆԻ, Եթե Փաշինյանը ստորագրի սահմանազատման պայմանագիրը՝ առանց արցախահայության ինքնորոշման իրավունքի շեշտադրման:

Նախ. Հայաստանի Հանրապետությունը մեկընդմիջտ կզրկվի Արցախի ճակատագիրը որոշելու ցանկացած հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետությունը կզրկվի Արցախի որեւէ տեսակի օժանդակության՝ ռազմականից սկսած մինչեւ ֆինանսական, սոցիալական, տրամադրման հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիներն այլեւս չեն կարող այցելել Արցախ:

Ամբողջովին կոչնչացվի Արցախի պետականությունը:

Այնուհետեւ. Ադրբեջանը անարգել մուտք կգործի Ստեփանակերտ եւ Արցախի մյուս տարածքներ, քանի որ ՀՀ-ն պաշտոնապէս ճանաչելով Ադրբեջանի սահմանները՝ փաստացի ճանաչելու է նաեւ Ադրբեջանի իրավագործությունն ամբողջ Արցախի վրա (վերելում նշել էի ինչպէս):

Արցախի 150.000 բնակչությունը կհայտնվի արդեւանական սուլթանի քաղաքներից ներքո. լավագույն դեպքում՝ կտեղահանվեն, իսկ վատագույնը՝ չեն ուզում նույնիսկ մտածել:

Այս ամենին հավելեք նաեւ այն, որ նույն Նիկոլն ասում է, թե ինչ կապ ունի Արցախի հարցը ՀՀ սահմանների հետ, ԵԱԿԿ Միսկի խումբն է զբաղվում Արցախի հարցի քաղաքական կարգավորմամբ՝ փաստացի արժարկներով ՀՀ-ի կողմից արցախահայությանը որեւէ երաշխիք տալուց, Արցախի հարցի քննարկումից Հայաստանի դուրս թողնելով եւ, միաժամանակ, գիտակցելով, որ այս ամենից հետո այլեւս անհրաժեշտ չի լինի որեւէ քաղաքական լուծում, այսինքն՝ դա հենց այդ լուծումն է Ադրբեջանի օգտին:

Հարկ է նշել նաեւ, որ դրանով նաեւ խաղաղապահների ներկայության հարցում որոշակի ռիսկեր կառաջանան, քանի որ նման պայմանագրի ստորագրումով է, փաստացի, Ադրբեջանի օգտին քաղաքական լուծում տալով Արցախի հարցին, ռուսների ներկայությունը Արցախում Ադրբեջանը կամ կհամարի ոչ անհրաժեշտ, կամ ռուսները պետք է արդեն Ալիեւի կետ միայն գործ ունենան, եւ խաղաղապահների հարցը կլուծվի միայն Պուտին-Ալիեւի համագործակցությամբ՝ դուրս թողնելով հայկական կողմին այդ գործընթացներից:

ԻՆՉ ՊԵՏԸ Ե ԱՆԵԼ:

Պետք է ամեն գնով չթուլալարել Փաշինյանին, որպէսզի ստորագրի սահմանազատման մասին որեւէ փաստաթուղթ՝ առանց Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման ներառման:

Հաշվի առնելով այս ամենը, Արցախի Հանրապետության նախագահը պետք է կատարի պետության անվտանգության, ինքնիշխանության, պետականության, տարածքային ամբողջականության պաշտպանության իր սահմանադրական պարտականությունները եւ առնվազն ՀՀ գործող իշխանություններից պահանջի սահմանազատման վերաբերյալ փաստաթղթի հանրայնացում եւ այդ փաստաթղթում առկա վտանգների բացատրություն, քանի որ, հակառակ դեպքում՝ այն ստորագրելու պարագայում, կնշանակի «հարյուր տոկոսով Արցախի պետականության ոչնչացում»:

Ամբողջ գիտակից հայ հանրությունը պետք է պահանջ դնի, որպէսզի սահմանազատման վերաբերյալ ստորագրվելիք ցանկացած փաստաթուղթ հանրայնացվի:

Ստորագրվելու դեպքում պետք է պահանջվի, որպէսզի այն հաստատվի ԱԾ-ով ու հանրությունը պետք է ուղի կանգնի ու բոլոր պատկազմողներից պահանջի, որպէսզի դեմ քվեարկեն հակահայկական ցանկացած պայմանագրի ու ցանկացած սահմանազատման վերաբերյալ փաստաթղթի, որտեղ կբացակայի Արցախի ու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման մասին հիշատակումը:

Մենք էլ պատրաստ ենք արձագանքելու թշնամու սաղրանքներին

Վարդաձորն Արցախի հին գյուղերից է։ Սկզբում գյուղն անտառի մեջ էր և տեղափոխված էր ավելի բարձրում, կոչվում էր Վարդոտ, սակայն տարածված համաճարակի պատճառով մարդիկ լքել են գյուղը և ավելի ցածրադիր վայրում հիմնել Նոր գյուղ։ Ըստ նախապատմության՝ Նոր գյուղը կոչվել է Փիրջամալ՝ Փիր և Ջամալ եղբայրների պատվին։ 1878թ. գյուղի անունը փոխվել է դարձել է Վարդաձոր՝ հաշվի առնելով գյուղի նախկին անունը։ Արցախյան առաջին պատերազմի տարիներին գյուղը գրավել են ադրբեջանցիները և այն հիմնահատակ ավերել, սակայն ազատագրումից հետո գյուղացիները հետ են վերադարձել և նորից վերականգնել գյուղը։



Նրա խոսքով՝ մշակվում են նշանառության տակ գտնվող բոլոր հողամասերը։ Ելնելով իր կյանքի փորձից՝ պարոն Սառաջյանը վստահ է, որ ժողովուրդն ապրելու է այստեղ, պարզապես, ըստ նրա, գյուղացուն պետք է օգնել։

«Օգնություն ասելով՝ ես չեմ հասկանում ամսական 68 000 դրամ բաժանելը, այլ ոռոգովի ջրի անխափան մատակարարում, որովհետև, եթե ջուր եղավ, Նոր, մեծ այգիներ կհիմնվեն։ Պետք է գյուղացիներին լավ սերմեր տրամադրել։ Ծիշտ է, 50 տոկոսով սուբսիդավորում է պետությունը, սակայն գարու սուբսիդավորած գինն արդեն 180 դրամ է. այդպիսի բան չի լինում։ Գյուղացուն պետք է լավ սերմ տաս, պարարտանյութ տաս, որպեսզի կարողանա արդյունք ապահովել։ Ես չեմ ասում՝ ձրի բաժանեն, այլ համապատասխան մատչելի տարբերակներ ստեղծեն։ Օրինակ, մեր շրջանում որոշվել է կարճաժամկետ վարկեր տրամադրվել, բայց գյուղատնտեսության մեջ 1 տարով, 9 ամսով վարկերն արդյունավետ չեն։ Գյուղացին ինչքան պետք է աշխատի, ինչքան պետք է եկամուտ ունենա, որ մեկ տարվա ընթացքում վարկն ամբողջությամբ մարի, դեռ մի բան էլ՝ օգուտ ապահովի իր համար և շարունակի ապրել», - նշում է նա։

Գյուղում ներկայիս տիրող իրավիճակի եւ խնդիրների մասին «Ապառաժ»-ը գրուցել է համայնքի ղեկավար Սամվել Սառաջյանի հետ։

Գյուղում կա հին գերեզմանոց, եկեղեցի՝ Սուրբ Աստվածածինը, որը մասամբ փլված է և չի գործում, սակայն բավականին տպավորիչ ու ազդեցիկ մթնոլորտ ունի և խնամվում է գյուղացիների կողմից։

Խորհրդային տարիներին գյուղը 450 բնակիչ ուներ, այսօր՝ 264 բնակիչ, 74 ընտանիք, շարունակվում են տների վերանորոգման աշխատանքները։ Ավարտին են հասցվել 9 բնակարանի աշխատանքները, 7-8 բնակարան էլ դեռ նախատեսվում է վերանորոգել։ Եթե կարիք լինի՝ կվերանորոգենք։ Ունենք տնամերձ հողամասեր, որտեղ անհրաժեշտության դեպքում կկառուցենք նաեւ նոր տներ», - ասում է Սամվել Սառաջյանը։

Գյուղում բնակչությունն զբաղվում է հողագործությամբ, նաեւ՝ անասնապահությամբ, սակայն արոտավայրերը քիչ են. հիմնականում դաշտավայրեր են, որոնք օգտագործվում են հողագործության համար։ «Կան շատ նախ այգիներ, վարելահողեր։ Ցավոք, դրանց մի մասն անցել է ադրբեջանցիների վերահսկողության տակ։ Ունենք շուրջ 150 հա հող Մուղանյու կոչվող գյուղի մոտ և 17 հա Մարտունի-Ակնա մայրուղու հարեանություն, սակայն հասկանալի պատճառներով գյուղացիները չեն կարողանում այդտեղ հասնել և մշակել հողերը», - նշում է համայնքի ղեկավարը։

Պարոն Սառաջյանը 1987-ից աշխատում է ոլորտում, եղել է գյուղխորհրդի նախագահ, եւ հստակ գիտի գյուղի սահմանները։ «Գյուղի սահմաններն այսպես չի եղել։ Այն ժամանակ, ըստ պայմանավորվածության, հայերն ու ադրբեջանցիները մշակում էին այս կամ այն կողմից հողեր և, եթե անգամ հաշվի առնենք Խորհրդային Միության ժամանակ գյուղի ունեցած սահմանները, ապա, բոլոր դեպքերում, մենք կորուստներ ունենք այսօր», - նշում է նա։

Պարոն Սառաջյանը շատ լավ գիտի, որ թուրքը երբեք չի փոխի իր ծրագրերը, եւ նպատակին հասնելու համար ցանկացած միջոց կարող է օգտագործել։

«Թուրքը մնում է թուրք։ Գնում աշխատում ենք իրենց դիրքերին շատ մոտ, եւ դեռ մարդիկ հարցնում են, թե ինչպե՞ս են

խանգարում մեզ։ Բայց երբ ուզի՝ կարող է կրակել և մարդ սպանել։ Նրանց դիրքերից դեպի մեր դաշտ կարող են ազատ կրակել, այդ իսկ պատճառով մեր հողերը ռիսկային գոտում են։ Ամեն դեպքում, եթե այստեղ ենք, պետք է աշխատենք, չենք կարող ամբողջ կյանքում վախվորած ապրել։ Նույն հաջողությամբ մենք էլ կարող ենք կրակել, սակայն արդեն մեծ կոնֆլիկտի կվերածվի։ Դեռ սպասում ենք, չենք կարող ճնշողունի պես թաքնվել թփուտում, որպեսզի թշնամին չկրակի մեզ վրա, պարզապես սպասում ենք փոփոխությունների, հակառակ դեպքում մենք էլ պատրաստ ենք արձագանքելու թշնամու սաղրանքներին», - ասում է Սամվել Սառաջյանը։

Նրա խոսքով՝ մշակվում են նշանառության տակ գտնվող բոլոր հողամասերը։ Ելնելով իր կյանքի փորձից՝ պարոն Սառաջյանը վստահ է, որ ժողովուրդն ապրելու է այստեղ, պարզապես, ըստ նրա, գյուղացուն պետք է օգնել։

«Օգնություն ասելով՝ ես չեմ հասկանում ամսական 68 000 դրամ բաժանելը, այլ ոռոգովի ջրի անխափան մատակարարում, որովհետև, եթե ջուր եղավ, Նոր, մեծ այգիներ կհիմնվեն։ Պետք է գյուղացիներին լավ սերմեր տրամադրել։ Ծիշտ է, 50 տոկոսով սուբսիդավորում է պետությունը, սակայն գարու սուբսիդավորած գինն արդեն 180 դրամ է. այդպիսի բան չի լինում։ Գյուղացուն պետք է լավ սերմ տաս, պարարտանյութ տաս, որպեսզի կարողանա արդյունք ապահովել։ Ես չեմ ասում՝ ձրի բաժանեն, այլ համապատասխան մատչելի տարբերակներ ստեղծեն։ Օրինակ, մեր շրջանում որոշվել է կարճաժամկետ վարկեր տրամադրվել, բայց գյուղատնտեսության մեջ 1 տարով, 9 ամսով վարկերն արդյունավետ չեն։ Գյուղացին ինչքան պետք է աշխատի, ինչքան պետք է եկամուտ ունենա, որ մեկ տարվա ընթացքում վարկն ամբողջությամբ մարի, դեռ մի բան էլ՝ օգուտ ապահովի իր համար և շարունակի ապրել», - նշում է նա։



Ըստ Սամվել Սառաջյանի՝ գյուղատնտեսական վարկերը պետք է երկարաժամկետ լինեն, նաեւ վերահսկեն, որպեսզի իրենց նպատակին ծառայեն տրված վարկերը։ Միայն համայնքի ղեկավարը չի կարող վերահսկել, քանի որ կան բազմաթիվ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներ, որոնք թույլ չեն տալիս նրան այդ ամենը ճշգրտությամբ իրականացնել։

Պարոն Սառաջյանը նշում է, որ գյուղացիները հուսահատված չեն, հակառակը՝ մտադրված են թշնամուն դեմ դիմաց Նոր այգիներ հիմնել, հիմնականում՝ նախ, արքայանախնջի եւ այլն։ «Օրինակ, մեզ մոտ լավ թուզ է աճում, սակայն մեկ օրում

փչանում է, եւ չենք կարողանում տեղափոխել մայրաքաղաք ու իրացնել», - ասում է նա։

Համայնքի ղեկավարը մտահոգություն է հայտնում՝ կապված վերջին շրջանում ճանապարհների ապաշրջափակման խնսակցությունների հետ։

«Եթե ճանապարհները բացվեն, մեր տեղականը դուրս կնվազի ադրբեջանական եւ իրանական եժան ապրանքների պատճառով», - վստահ է նա։

Ըստ նրա՝ անթույլատրելի է ճանապարհների ապաշրջափակումը, եթե դա իրականացվում է ի հաշիվ մեզ, ի հաշիվ մեր երկրի։ Նա վստահ է՝ համատեղ ապրելը հնարավոր բան չէ։

«Համատեղ կարո՞ղ ենք ապրել, եթե Հաղորթում ու Շուշիում թուրք ապրի, իհարկե՞ ոչ։ Նրանք այդտեղ մեզ հետ կարող են ապրել միմյանց Արցախի գերիշխանության ներքո։ Ադրբեջանի կազմում հայտնվելու մասին մտածել անգամ չի կարելի։ Նրանք կրկին կփակեն մեր դպրոցները՝ իրենց կրթության, կարգել են մեր լեզուն՝ իրենց կայարտադրեն։ Համատեղ հնարավոր է ապրել, եթե լինի վերջնական որոշված կարգավիճակ եւ մեր երկրի տերերը մենք լինենք. այդ պարագայում թող մեր երկրում ո՞վ ուզում է ապրի։ Ես նույնիսկ եղբոր պես կապրեմ իրենց հետ, թեկուզ ունենմ կորցրած հարազատներ։ Աշխարհի վերջը չէ, հնարավոր է ապրել, եթե մենք ունենանք առանձին կարգավիճակ եւ ցանկության պարագայում թող գան ու ապրեն մեր տիրապետության տակ», - ասում է նա։

Բնակչությունը մտադրված չէ գյուղը լքել։ Գյուղին պատկանող 1200 հա սեփական հողն ամբողջությամբ մշակվում է գյուղացիների կողմից։ Ընդամենը 35 հա է, որ վարձակալությամբ տրվել է այլ անձանց։ Գյուղի հողային կորուստը կազմում է մոտ 450 հա։

«Եթե ասենք՝ հողերը մերն է, ռուսներն էլ ասեն՝ եկեք մշակեք, ապա միայն մի ճանապարհ կա՝ թշնամու մոտով պետք է անցնեք։ Իսկ ես չեմ ուզում իրենց մոտով շատ անցուղարձ լինի, որովհետև իրենց պարկեշտ չեն պահում եւ վեճի է վերածվում», - նշում է նա։

Գյուղում կա մշակույթի տուն, հանդիսությունների սրահ։ Պատերազմից հետո մշակութային շատ ուշադրություն չեն դարձնում, հիմնականում հիշատակի եւ տոն օրերն են նշում։ Գյուղի մշակույթն այսօր չունի այն փառքն ու ակտիվությունը, որ ուներ խորհրդային տարիներին։

Դպրոցը կոչվում է Նախիջեանիկի միջնակարգ դպրոց, սակայն Վարդաձորի վարչական տարածքում է գտնվում։ Համայնքի ղեկավարը մի քանի անգամ բարձրաձայնել է անվանափոխության հարցը, սակայն լուծում չի ստացել։

Ըստ համայնքի ղեկավարի՝ գյուղում կան ամուսնացողներ, կլինեն ծնունդներ՝ եթե լինի խաղաղություն։

«Խաղաղություն ասելով՝ ի նկատի չունեմ, որ մուրալով ապրենք. մասշտաբային եւ արմատական հարցեր պետք է լուծվեն, որոնք ժողովրդի կենսակերպի վրա եական ազդեցություն կունենան դեպի լավը», - նշում է նա։

Գյուղի առաջնահերթ խնդիրը եղել ու մնում է Ասկերան-Վարդաձոր ճանապարհի վերանորոգումը, որի համար բազմիցս խոստումներ են հնչել, սակայն այդպես էլ իրականություն չեն դարձել։ Այժմ էլ խոստացել են 2022-ին վերանորոգել գյուղացիներն սպասում են։

Ջուր, գազ, լույս, համացանց, հեռախոսակապ գյուղում կա։ Համայնքի ղեկավարի կարծիքով՝ գյուղի զարգացումը մեծապես կախված է բարվոք ճանապարհից։ «Մենք 10 րոպեի ընթացքում կարող ենք Ասկերան հասնել, իրացնել գյուղի բարիքները։ Գյուղացիների պատճառով չենք կարողանում մեր գյուղի մածուկը հասցնել Ստեփանակերտ, ստիպված պահիր ենք վաճառում, որն այդքան էլ ձեռնառն չէ գյուղացու համար։ Բացի այդ, մեր գյուղացիներն էլ են ուզում իրենց շքեղություն թույլ տալ, ժամանակակից ավտոմեքենաներ ձեռք բերել, որոնք ե՛լ հարմարավետ են, ե՛լ քիչ ծախսատար, սակայն ճանապարհների պատճառով չեն կարողանում ձեռք բերել», - ասում է Սամվել Սառաջյանը։

Գյուղը նաեւ մանկապարտեզի խնդիր ունի։ Եթե 2 գյուղերի համար մեկ մանկապարտեզ կառուցեն՝ լավ կլինի, - կարծում է համայնքապետը եւ ավելացնում, որ տարիներ ի վեր այդպես էլ հարցին լուծում չի տրվում։

Պատերազմի ընթացքում գյուղը նյութակազմ վնասներ չի կրել։ Ակտիվ մասնակցություն են ունեցել ե՛լ աշխարհագրորդ, ե՛լ պահեստազորը։

Խոսելով ստեղծված իրավիճակի եւ կրած պարտության մասին՝ համայնքի ղեկավարը նշեց, որ պարտության պատճառը նաեւ արդիական զենքերի պակասն էր, որովհետև եղածն էլ ոչնչացվեց թշնամու կողմից՝ անօդաչուներով։ Նրա կարծիքով՝ նաեւ կազմակերպական խնդիրներ կային։

«Տեղ կար, որ նույնիսկ առանց զենքի կարող էին առաջխաղացում ապահովել, անհասկանալի նահանջի հրամաններ էին տրվում։ Զաղաքականությամբ ժողովրդին տարբեր մասերի բաժանեցին, պառակտեցին եւ հասցրին պարտության։ Կարծում եմ, որ եթե մի քիչ շուտ կանգնեցնեին, քիչ զոհեր կունենայինք», - ասում է նա։

«Եթե մեր հարցը չլուծվի, եթե մեր կարգավիճակը չհստակեցվի, մենք պետք է ոչ թե այս երկրից փախչենք, այլ չենթարկվենք նրանց՝ ինչպես դա արեցինք 1988-ից ի վեր։ Ծիշտ է, հնարավոր է մի քիչ դժվար լինի՝ հաշվի առնելով ՀՀ իշխանությունների անտարբերությունը։ Եթե այն ժամանակ բոլորս մեկ մարդու նման մի նպատակի համար էինք պայքարում, այսօր մենք չենք զգում այդ համախմբվածությունը։ Այնուամենայնիվ, մենք պետք է համախմբվենք, Նորից վերստեղծենք մեր բանակը, կազմակերպենք մեր ինքնապաշտպանությունը։ Իհարկե, ՀՀ իշխանությունից գատ մենք զգում ենք հայաստանաբնակ մեր հայրենակիցների աջակցությունը։

Այսպիսի մի բան էլ կա. ի՞նչ տարբերություն՝ մնալ այստեղ եւ թեկուզ ամբողջ ընտանիքով ոչնչանալ, կամ՝ գնալ Ռուսաստան եւ ընդամենը 6-7 տարում ծուլվելով ոչնչանալ որպես հայ՝ կորցնելով ազգային ինքնությունը։ Ուստի, չպետք է լքել հայրենիքը, այլ պայքարել. գուցե հաջողության հասնենք։ Ես վստահ եմ, որ հայը, եթե լավ մտածի, կկարողանա ելք գտնել անգամ ամենադժվար իրավիճակներից, պարզապես լավ ղեկավարություն է հարկավոր, որպեսզի առաջնորդի ժողովրդին դեպի հաղթանակ», - եզրափակում է պարոն Սառաջյանը։

Այստեղ ապրում է հիշողությունը

Արեւածագը եկավ, հավաքվեց մեր գյուղի հայտնի բլրին, բայց սա ուրիշ արեւածագ էր, արեւը դալուկ աղջկա տեսք ուներ, ով ուզում էր խոսել, պատմել հույզերը, բայց չէր կարողանում, լեզուն կապ էր ընկել, բառերը մնացել էին ներսում: Նա իմ կյանքում երբեք հանդիպած ամենատխուր աղջիկն էր: Ես ուզում էի, որ նա ժպտար առաջվա պես, բայց նա նայեց ուղիղ աչքերիս, եւ մենք լաց եղանք անցած օրերի համար: Հետո նա լուռ թեքվեց դեպի գերեզմանատուն եւ փաթաթվեց նորահայտ գերեզմանաթմբերին, որոնք ծածկվել էին գույնզգույն ծաղիկներով: Նրանց ամեն օր այցելում էին, նրանց ամեն օր ծաղիկներ էին բերում նորից ու նորից, ծաղիկները պինդ գրկում էին նրանց, բայց նրանք մնում էին նույնը, նրանք չէին ջերմանում: Ծաղիկներն ուզում էին, որ նրանք խոսեն, բայց ոչ ոք չէր խոսում, կարծես դա այդպես էլ պիտի լիներ...

Արեւը մնաց բարձունքում, որ երեկոյան ցած իջնի, ու գերեզմանաթմբերը ծաղիկների հետ նորից ման բարձունքում... Բարձունքում կյանքն ուրիշ իմաստ ունի, ավելի ճիշտ՝ իմաստ ունի, իսկ ներքեւում կյանքը պարզապես հոսում է, եւ մարդիկ ամեն օր լող են տալիս անորոշության գետում, ափ են փնտրում ու չեն գտնում... Արեւը բարձունքն է սիրում. այնտեղ օրվա մեջ խորհուրդ ու աղոթք կա:

Գիշերը բոլորը փակում են դուռ ու պատուհան: Գյուղում առաջին անգամ է նման բան: Առաջ ո՞վ էր եղպես անում, ի՞նչ ունեին թաքցնելու. հարեւանը հարեւանից ավելի լավ գիտեր հարեւանի տան եղած-չեղածի մասին: Ճիշտ է՝ բոլորը չէ, որ ուրախանում էին հարեւանի եղած-չեղածով, բայց, մեկ է, ձեռքները չէր գնում որեւէ բան գողանալ... Գյուղի բոլոր տների դռները փակվում են արեւամուտի հետ, եւ պատճառը ամենեւին վատ-հույսի պակասը չէ, պատճառը գյուղից դուրս է, մի քանի կիլոմետր հեռու, որտեղ հողը գերության մեջ է եւ հողի վրա քայլում են իրական գողերը...

Արեւագալի հետ ոչ ոք չի շտապում բացել գոմի դուռը եւ դուրս տանել անասուններին: Դուրսն էլ է արդեն փոխվել. ամեն դուրս չէ, որ կարելի է տանել: Իսկ անասունները հաճախ են շփոթում «դուրս»-ը, եւ երբ հայտնվում են ուրիշ դրսում, էլ հետ չեն գալիս: Դուրսը դարձել է Բերմուդյան եռանկյունի. կլանում է տանում մարդ ու անասուն, եթե հանկարծ հայտնվում են ոչ ճիշտ կողորդիստում...

Գիշերն ու լամպը ընկերներ են. ավելի լավ ընկերներ չես գտնի: Մաման նույնիսկ առավոտյան այն չէր հանգցնի, եթե չլիներ նավթի սպառման վտանգը: Լամպը մի տեսակ հույս է ներշնչում, որ դեռ լույսը կորած չէ, որ մի օր գյուղի լույսերը կտան, ու ամեն ինչ կփոփոխի դեպի լույսը:

Մաման մոմի լույսի տակ դասերն է պատրաստում. պետք է վաղը գրավոր տա մոմի լույսի տակ դաս սովորող աշակերտներին: Մաման հավատում է, որ իր աշա-

կերտները լավ մարդիկ են դառնալու, եւ դրա համար էլ գրավորները ստուգելիս այն է քաշում. ամեն մի սխալը մի այն է... Իմ սխալների վրա էլ էր եղպես այն քաշում, հիմա էլ է քաշում, բայց եւ ժամանակ կարողանում էր կարմիրով ուղղել սխալներս, հիմա չի կարողանում: Արդեն քանիտերոգ անգամն էմ մասնակցում կյանքի քննությանը ու քանիտերոգ անգամն էմ կտրվում քննությունից. պատճառը պարզ է՝ միշտ նույն տոմսն էմ սովորում... Ես նախանձում էմ մամային: Հիմա հասկանում էմ, թե ինչու են շատերը նրան նախանձում: Նա նախանձելու ոչինչ չունի. պարզապես նա մարդ է, ով նախանձողների համար աղոթում է... Ես շատ աղոթքներ ունեմ նրանից սովորելու...

Չոկվածների հայրերի մոտով գլխիկոր էմ անցնում: Պետք է երես ունենալ նրանց նայելու համար. ո՞ր է թե

ընտրում...

Լամպի լույսը լուսավորում է հորս լուսանկարը. նրա նկարի առաջ ծաղիկները երբեք չեն թառամում, որովհետեւ մաման շատ ուշադիր է վերաբերում դրան: Երբ փոքր էի, կարծում էի, թե ինչքան շատ լինեն ծաղիկները, այնքան շուտ կգա պապան: Գուցե մաման էլ էր եղպես մտածում, չգիտեմ... Ծաղիկները նույնն են, լուսանկարն էլ է նույնը, բայց ես ու մաման էլ նույնը չենք... Հիմա մենք չենք նայում հորս աչքերին, որովհետեւ նա շատ հարցեր ունի մեզ, որոնց պատասխանները չունենք, որոնց պատասխանները մենք թողել ենք Աստծուն, իսկ Աստված ձայն չի հանում...

Մաման երեկ գիշեր երագում տեսել էր, որ մեր գյուղացի Աշոտի տղան ողջ է. հաջորդ օրը պատմել է Աշոտին, Աշոտը ժպտացել է. Աշոտը երեք ամիս է՝ չէր ժպտում: Մեկ օր անց իմացել է՝ տղայի մարմինը գտել են: Մաման չի քնում, որ երագներ էլ չտեսի. ո՞ւմ են պետք երագները, եթե դրանք խաբում են...

Հիմա գյուղում կյանքը բաժանվել է երկու մասի. առավոտյան արթնանում են հավատով, եւ ամեն մեկը գնում է իր գործին, երեկոյան տնեցիները շուտ են գնում քնելու, որ իրարից թաքցնեն իրենց աչքերը: Գիշերը ամենամեծ թշնամին է, գիշերն այլևս երագելու համար չէ. այն շատ բան է հիշեցնում, երեսով տալիս, սպառնում, քրքջում, հետո հեռանում՝ երագները գրպանում պինդ փակած...

Մի քանի տեղ կա գյուղում, պետք է այցելել: Այդ վայրերում թիթեռներ էինք բռնում եւ հանելուկներ հորինում երջանկության մասին. չէինք հասկանում, որ երջանկությունը դա է՝ որ կար... Ես փնտրում էմ թիթեռներին, որ շնորհակալություն ասեմ լավ օրերի համար. թիթեռները չկան, թիթեռները կարծ կյանք ունեն՝ ինչպես երջանկությունը, բայց ես գիտեմ՝ թիթեռները միշտ վերադառնում են՝ ինչպես երջանկությունը...

Հուշերս հավաքել էմ սրտիս մեջ. սիրտս մի մեծ ճամպուրկ է դարձել, որ ամեն անգամ ինձ հետ տանում-բերում էմ: Ինձ դուր է գալիս այդ ծանր ճամպուրկով քայլելը, որովհետեւ չեմ ուզում ազատվել դրանից, որովհետեւ ամեն մարդ իր ճամպուրկի համար է պատասխանատու, եւ ամեն մի ճամպուրկից մի հատ է այս աշխարհում...

Սրտիս ծանրությունը թեթեւանում է անտառից եկող թարմ օդից, հետո հիշում էմ՝ անտառից այնպիսի նրանք են, որ եկել են մեր անտառներն ու թարմ օդը տանելու. ես ավելի լիաթոք եմ շնչում, որ նրանց օդը պակասի... Ես չգիտեմ՝ Աստված ինչպես է բաժանում արդարությունը, բայց հավատում եմ՝ Աստված միշտ գալիս է արդարության հետեւից...

**Հեղինակ Ավագյան
Դեկտեմբեր 2020թ., Արցախի
Հատված «Իմ ու քո պատերազմը» օրագրից**



լիներ... Հիմա ներողությունն ամենադատարկ խոսքն է. ինչքան էլ այն կրկնես, մեկ է՝ դատարկ է, որովհետեւ այն ոչ մի բանով չես լցնի ու նրանով էլ ոչ մի բան չես լցնի:

Մենք բոլորս դատարկ ենք, թեեւ բոլորս չենք զգում դա... Մենք երբեք չենք լցվելու, քանի չենք զգում, որ պետք է լցվենք...

Գյուղի ցեխերը մերն են. միշտ էլ մերն են եղել: Առաջ չէի սիրում ցեխերը, հիմա ուզում եմ, որ ցեխ լինի, որպեսզի ոտքերս ավելի խորը մխրճեմ հողի մեջ: Առաջ բոլ-բոլ գրում էի ցեխերի մասին, հիմա չեմ գրում. հասկացել եմ՝ ցեխերը ամեն օր ցույց են տալիս, թե որտեղից է սկսվում հայրենասիրությունը...

Ամեն առավոտ խաղաղությունը գալիս է գյուղ, գնում է գյուղամեջ, հայտարարում է, որ եկել է, շրջում է տներով, որպեսզի ոտքերը տաքացնի վառարանների մոտ, որովհետեւ ցուրտ տեղերից է գալիս, եւ չգիտի՝ վաղը կկարողանա՞ գալ, թե՞ ոչ: Նա գիտի՝ ինչքան էլ տրտնջանք, մեկ է, երբ էլ գա՝ գրկաբաց ենք ընդունելու, որովհետեւ մեր երագանքները միայն նրան կարող ենք պատմել, որովհետեւ ուրիշ ընկեր չունենք, որովհետեւ մենք միշտ ընտրում ենք նրան, իսկ նա ոչ միշտ է մեզ

ՀՀ Արցախի երիտասարդական միության անդամները Սիրիայում

ՀՀ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի նախաձեռնությամբ նոյեմբերի 22-ին Սիրիա են ժամանել ՀՀ Արցախի երիտասարդական միության անդամներ՝ Վահագն Խաչատրյանը (Մարտունի) եւ Բենո Բաբայանը (Ստեփանակերտ):

Նրանք ծանոթացան տեղի երիտասարդական ու պատանեկան միությունների աշխատանքներին, մասնակցեցին վարժողական համապատասխան ծրագիրներին՝ նպաստելով փորձառությունների փոխանակման կարեւոր գործին:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի առաջնային նպատակից բխելով՝ սերտացնել եւ հզորացնել Արցախ-Սփյուռք հարաբերությունները եւ համահայկական, եւ ՀՀ երիտասարդական միությունների մակարդակով:

Արցախի ընկերները այցելեցին Հայկական եկեղեցիները, նաեւ «Գանձասար»-ի խմբագրատուն, ծանո-



թացան խմբագրակազմին եւ դրա աշխատանքներին, գուրցեցին խմբագրի հետ, տեղեկություններ փոխանցեցին

Արցախի ներկա իրավիճակի շուրջ: Նոյեմբեր 24-ին Բերիոյի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս.

Չօպույանը իր գրասենյակում ընդունեց ՀՀ Արցախի երիտասարդական միության երկու անդամներին:

Սրբազան հայրը բարի գալուստ մաղթեց արցախցի երիտասարդներին, ապա համապարփակ կերպով անդրադարձավ Թեմի պատմությանը, Սիրիայի պատերազմի ծանր տարիներին, քաղաքական առումով համեմատաբար ավելի կայուն ներկա իրավիճակին եւ Թեմի ողջ տարածքի ուսումնական, կրթական, եկեղեցական, կրոնական առաջիկա լայնածավալ ծրագրերին:

Երիտասարդներն իրենց հերթին Սրբազան հորը տեղեկություններ փոխանցեցին Արցախի ներկա իրավիճակի եւ դժվարությունների մասին, անդրադարձ կատարվեց նաեւ Արցախյան 44-օրյա պատերազմին:

Ծրագրում ներառված են նաեւ այցելություններ Սիրիայի ազգային վարժարաններ, Համազգայինի Հայագիտական Հիմնարկ, Հայոց Թեմի եկեղեցիներ, ազգային ու մշակութային կառույցներ:

44-օրյա պատերազմը Լեռնային Ղարաբաղում

Սկիզբը՝ Նախորդ համարներում
Ներկայացնում ենք ամերիկյան բանակի թռչակա-
ռու փոխգնդապետ, դոկտոր-պրոֆեսոր Էդուարդ Զ.
Էրիքսոնի՝ 2020-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ
սանձազերծած պատերազմի մանրամասների եւ
Ադրբեջանի ռազմավարական հաջողության պատ-
ճառների մասին վերլուծության թարգմանության 2-
րդ մասը:

«Ապառաժ»-ն ամբողջովին չի կիսում հոդվածում տեղ գտած տեսակետներն ու եզրակացությունները:

Պատերազմի ծրագրի վերլուծությունը

Արդեն շատ բան է հրապարակվել 44-օրյա պատերազմից մարտավարական դասեր քաղելու մասին, ինչպես նաեւ կանխատեսումներ՝ գրահապատ մեքե-



նաների ենթադրաբար արժեզրկման, համեմատաբար էժան անօդաչուների եւ «ինքնասպան» անօդաչուների դերի մեծացման, գերճշգրիտ հարվածների արդյունքում առավել կործանիչ հետեւանքներ ունենալու մասին: Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ նմանատիպ կանխատեսումներ եղել են արաբա-իսրայելական պատերազմից հետո՝ 1973թ.՝ Երբ, որ գրահապատ եւ վերերկրյա հարձակման գիտնականները ռազմի դաշտում նույն կիրառությունը չի ունենա, ինչպես Նախորդ պատերազմների ժամանակ: Ես կանխատեսումները կթողնեմ այլ հեղինակներին:

Ավելի շատ ի՞նչ կարող ենք ասել Ադրբեջանի ծրագրի մասին:

Տեսական ժամանակ թուրքական ռազմական համագործակցությունը շատ հաջողված էր: Այն, որ նրանց սովորական ռազմական ուժերը (հատկապես զուամրտակային եւ ցածր մակարդակում) չեն փայլում աստղային փայլով, տեսանելի են դառնում ռազմական ուժերի զարգացման առաջնահերթությունները: Ադրբեջանը ներդրումները տեղաբաշխել է միտումնաւոր ընտրությամբ՝ որոշները գերադասելով մյուսներից: Ռազմաօդային ուժերի ներդրումների մեծ մասը կատարել է ԱԹՍ-ների եւ բալիստիկ հրթիռների վրա, իսկ վերերկրյա ուժերի ներդրումների մեծ մասը կատարել է հատուկ զորքերի, հրամանատարության եւ սպայական կազմի վերապատրաստումների եւ կրթության վրա: Չնայած Ադրբեջանի հաջողությունների մի մասը վերագրվում է իսրայելցիներին, մեծ մասը բաժին է ընկնում թուրքերին:

Երկրորդ, պատերազմի ծրագիրը պարզ էր, ուներ արդյունավետորեն հավասարակշռված նպատակներ, ուղիներ եւ միջոցներ:

Ադրբեջանի բանակը հենակետեր ունենալու եւ հետագայում դեպի հյուսիս գնալու համար Արաքսի հովտում կենտրոնացրեց իր հիմնական մաներային ուժերը՝ հզորացված հատուկ նշանակության զորքերի եւ

ԱԹՍ-ների միջոցով: Լաչինի միջանցքի ընտրությունը ծրագրի ակնհայտ նպատակներից մեկն էր, ինչն Արցախում գտնվող հայկական ամբողջ բանակին ծայրահեղ անօգնական վիճակում դրեց:

Շուշիի գրավումը հանգեցրեց ռազմական գործողությունների անհապաղ ավարտին՝ Ալիեւի կողմից թելադրված կանոններով: Ռազմական առումով՝ ադրբեջանական ծրագիրն աշխարհագրական ուղղվածություն ուներ, ոչ թե ուժային/ռազմական, ինչի արդյունքում պատերազմը հաջող ավարտ ունեցավ:

Երրորդ, ադրբեջանցիներն օգտագործեցին իրենց ԱԹՍ-ների եւ բալիստիկ հրթիռների ներուժը ոչ միայն մարտավարական, այլեւ գործառնական մակարդակներում: Կարողալով նրանց ՊՆ-ի ամենօրյա հաղորդակցությունները պատերազմի օրերին, պարզ է դառնում, որ Արցախում օպերատիվ եւ մարտավարական կապի միջոցների խափանումը լրջորեն թուլացրել էր հայկական ուժերին: Կասկածից վեր է, որ Արցախում կենսական պահերին հայկական ուժերից շատերի մոտ սպառվեցին զինամթերքի, սննդի, վառելիքի եւ այլ ռազմական պարագաների պաշարները: Այս միջոցը պատերազմի նոր մոտեցում չէ. այն օգտագործվել է Նորմանդիայում՝ 1944-ին եւ Զուլվեյթում՝ 1991-ին: Բայց որոշ չափով զարմանալիս այն է, որ ադրբեջանցիները փորձել են անցկացնել խորը մարտեր: Հավանաբար, ադրբեջանցիներին չհաջողվեց հասնել այդ ամենին, ինչը նրանք ցանկանում էին, բայց նրանց հաջողությունն ակնհայտ էր մարտի դաշտում:



Ծրագրի չորրորդ՝ կարեւորագույն կետը, ռազմավարական արդյունքներն են, որոնց հասնելու համար հակառակորդին այնպիսի իրավիճակի հասցնելն էր, որից չի կարող վերականգնվել: Շուշիի գրավումը հասցրեց դրան, քանի որ ջարդված հայկական ուժերը ի վիճակի չէին հետ գրավել քաղաքը: Շուշիի գրավումն ապահովեց Լաչինի միջանցքի արգելափակումը՝ Արցախում կենդանի մնացած հայկական ուժերի լրիվությամբ հանձնվելը դարձնելով միայն ժամանակի հարց: Փաշինյանի ստորագրած համաձայնագիրը վերջնականապես ապացուցում է այս միտքի ճշմարտացիությունը:

Հինգերորդ, «միասնականության» առումով, ադրբեջանական օդուժը, ցամաքային եւ ջրային ուժերը կարողացան համատեղ արդյունավետորեն պատերազմել: Նրանց միասնական համագործակցության ամբողջ ծավալն ակնհայտ է, բայց ակնհայտ է, օրինակ, որ ռազմաօդային ուժերի ԱԹՍ-ներն ուղղակիորեն եւ հաջողությամբ աջակցում էին շփման գոտում գտնվող ստորաբաժանումներին: Պարզ է նաեւ, որ «Համատեղ կորպուսը» Միրզաբեյի հրամանատարությամբ ստեղծվել էր Շուշիի գրավման համար:

Եվ վերջում, պատերազմը անհայտության եւ անորոշության տիրույթ է, որտեղ ոչինչ «հստակ» չէ: Կարլ Ֆոն Կլաուզեֆիցի «Պատերազմի մասին» ֆիլմն այս ամենի մասին է: Ադրբեջանի հաղթանակը երբեք երաշխավորված չէր: Նրանք հիմնական ջանքերը կենտրոնացրել էին համեմատաբար փոքր թվով, սակայն ճշգրիտ եւ սեստրային համակարգերի միջոցով հարվածներ հասցնել հայկական կարեւոր ռազմաբազաների վրա եւ որոշիչ գերակայություն ունենալ: Ռազմական գործողություններն սկսվելուց մի քանի օր հետո ադրբեջանցիներն արդեն տիրապետում էին իրավիճակին, ինչը նրանց տվեց գործողությունների եւ նախաձեռնության ազատություն: Հասարակ լեզվով ասած, մարտադաշտը պատկանում էր իրենց: Այս ամենը փոքր ձեռքբերում չէ ցանկացած բանակի համար եւ արժանի է ուշադրության: Սա չի նշանակում, որ ադրբեջանական բանակը գործել է անթերի. ոչ, այդպես չէ: Բայց այն, ինչ նրանք ճիշտ արեցին, գերազանցում էր նրանց սխալների քանակին:

Վերջաբան

Կասկածից վեր է, որ Ադրբեջանի զինված ուժերի 2020թ. ծրագրված պատերազմը՝ վերականգնելու հայերի կողմից օկուպացված Ղարաբաղի կարեւոր տարածքները, աննախադեպ հաջողություն ունեցավ: Նպատակների, ուղիների եւ միջոցների համար պատերազմը պահանջեց ավելի շատ մանրակրկիտ եւ հավասարակշռված մոտեցում, քան ԱԹՍ-ներ: Ավելին, Ադրբեջանի միասնական ծրագրումը, նախապատրաստումը եւ մարտունակությունն ապացուցեցին, որ գերազանցում էին հակառակորդի մարտունակությանը եւ նախապատրաստմանը: Պետք է նշել նաեւ, որ Թուրքիայի ռազմական աջակցությունը եւ ռազմական որոշ ոլորտների թիրախավորված զարգացումը եւ ներուժի աճը Ադրբեջանին հնարավորություն տվեց 21-րդ դարում պատերազմի նոր արվեստ ցուցադրել: Վերջապես, 2020-ին Ղարաբաղի պատերազմում Ադրբեջանի հաջողությունն արդյունք էր պրոֆեսիոնալ բանակի ստեղծման երկարաժամկետ ընթացքի եւ համակցված որոշումների ընդունման կարողության:

Թարգմանեց Լ. Իշխանյանը

Հայտարարություն

Կորել է Ռուբեն Վլադիկի Խաչատրյանի՝ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից 2018թ. տրված ճառագայթային ախտորոշման կլինիկական օրդինատուրայի դիպլոմը: Համարել անվավեր: